

ԱՐԱՐԱՏ ԳԱՐԻՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՎ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յերկրորդ վերամշակման հրահանգով

49199-5

2-47

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱՆԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1987

491.99-5

Դ-97

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՖՅԱՆ

58

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

1. ՀԱՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ
2. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
3. ԶԵՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՎ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Յերկրորդ վերամշակված հրատարակություն

4/3-16/1278

19 JUN 2013



1010
43038

ԽՈՍՔ ՅԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 1. ԽՈՍՔ

Խոսքը լինում է բանավոր և գրավոր:

Բանավոր խոսքն ասվում է, իսկ գրավոր խոսքը գրվում և կարդացվում է:

Խոսքը բաղկացած է մի կամ ավելի միավորներից՝ նախադասություններից:

Խոսքի միավոր է համարվում այն բառը կամ բառերի այնպիսի կապակցությունը, վոր ամփոփ միտք է արտահայտում. որինակ՝

1. Խորհուրդների յերկրում սոցիալիզմը հաղթանակել է:

Այս խոսքը բաղկացած է մեկ միավորից, վորը մի ամփոփ միտք է արտահայտում:

2. Մեռնում է հին ու խարխուլ Յերեվանը: Ծնվել ու հախուռն կերպով աճում է կարմիր Յերեվանը:

Այս խոսքը բաղկացած է յերեքու միավորից, վորոնցից յուրաքանչյուրը մի ամփոփ միտք է արտահայտում:

3. Մենք չունեյինք սեւ մետաղագործություն, յերկրի ինդուստրացման հիմքը: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք տրակտորային արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք ավտոմոբիլային արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք հաստոցաշինություն: Այժմ մենք ունենք այն:

Մենք չունեյինք լուրջ և ժամանակակից քիմիական արդյունաբերություն: Այժմ մենք ունենք այն:

(Ս ա լ ի ն)

Այս խոսքը բաղկացած է տասը միավորից, վորոնցից յուրաքանչյուրը մի ամփոփ միտք է արտահայտում:

§ 2. ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Քառերով արտահայտված յուրաքանչյուր ամփոփ միտք, կոչվում է նախադասություն. որինակ՝

1. Յերեվանում կառուցվում է սինթետիկ կառուցուկի գործարան:
2. Են վոր նայում ես սարերի լանջին, Պուտերի խումբն է կարմրին տալիս, Լսում ես ջահել արտերի միջին Արտուտի ազատ կանչը թնդալիս, Յե՛վ այդ հաղթական ցնծալի կանչին, Տեսնում ես, նորեկ ընկեր թռչուններ Արծազանգում են, տալիս վողջույններ Ազատ յեթերում՝ Տես այն եմ սիրում:

(Հա կ. Հ ա կ ո բ յ ա ն)

Վերևում բերված յերկու նախադասություններից յուրաքանչյուրը մի ամփոփ միտք է արտահայտում, միայն՝ առաջինն ամփոփ միտքն արտահայտում է մի նախադասությամբ, իսկ յերկրորդը՝ մի ամբողջություն կազմող յոթը միահյուսված նախադասություններով:

Առաջին նախադասությունը կոչվում է պարզ նախադասություն, իսկ յերկրորդը՝ բարդ նախադասություն:

Իհաենք, վոր խոսքը կազմված է լինում նաև մեկից ավելի նախադասություններից: Բայց նախադասությունների պատահական միացումով խոսք չի կազմվի: Անհրաժեշտ է, վոր խոսք կազմող նախադասությունները դասավորված լինեն հետևողական կերպով այնպես, վոր յուրաքանչյուրի արտահայտած միտքը կապված լինի նախորդի հետ, բղխի նրանից:

Բանավոր խոսքի մեջ նախադասության վերջում սովորաբար ձայնն իջնում է, և խոսողը մի պահ դադար է առնում:

Իրավոր խոսքի մեջ նախադասության վերջում չքվում է վերջակետ:

§ 3. ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ամեն մի պարզ նախադասություն ամենաքիչը ցույց է տալիս, վոր մի առարկա մի բան անում կամ լինում է. որինակ՝

Աշակերտը սովորում է դասը:

Թռչունը յերգում է:

Ծաղիկը ծաղկում է:

Կուլտանտեսականն աշխատում է:

Այս նախադասությունները ցույց են տալիս, թե Վճր առարկան (աշակերտը, թռչունը, ծաղիկը, կուլտանտեսականը) ի՞նչ է անում կամ լինում (սովորում է, յերգում է, ծաղկում է, աշխատում է):

Առարկա ասելով պետի հասկանալ՝ իրեք (ծառ, փայտ, գիրք, քար, սեղան), կենդանի առարածներ (թռչուն, մարդ, զայր, մրջյուն, աղա, ոճ, վորդ, և այլն), յերեվայրներ (փոթորիկ, հրճվանք, վազեվորություն), անցքեր (հեղափոխություն, պատերազմ, դարձադուլ), հարաբերություններ (միություն, թշնամություն, ջահադործում, սեր) և այլն:

Առարկաների անունները պատասխանում են մի կամ ի՞նչ հարցին. մի հարցը արվում է անձերի անուններին, իսկ ի՞նչ՝ իրերի անուններին, որինակ՝ Ո՞վ. աշակերտ, ուսուցիչ, հաշվապահ, հայր և այլն:

Ի՞նչ. ծառ, փայտ, վորոտ, հեղափոխություն և այլն:

Բառերը նախադասության մեջ դանադան դեր են կատարում: Այդ դեպքում նրանք կոչվում են նախադասության անգամներ:

Նախադասության գլխավոր անգամներն են յենթական և ստորոգյալը:

Նախադասության մյուս անդամները կոչվում են յերկրորդական անգամներ կամ յրացումներ:

Յենթապա կոչվում է նախադասության այն անգամը, վոր ցույց է տալիս, թե զարծաղը կամ լինողը ո՞վ կամ ի՞նչն է. որինակ՝

Լուսիկը կարդում է:

Սեղիկն աշակերտունի յե:

Վարսիկը լսում ե:
Ծաղիկը բացվում ե:

Այս նախադասութիւնների մեջ *Լուսիկը*, *Սեղիկը*, *Վարսիկը* և *ծաղիկը* յենթակառուցեալ են, քանի վոր ցույց են տալիս, թէ ո՛վ ե կարողում, ո՛վ ե աշակերտուհի, ո՛վ ե լսում, ի՛նչն ե բացվում: Յենթական պատասխանում ե ո՛վ կամ ի՞նչ հարցին: Յենթակա սովորաբար լինում են առարկաների անունները:

Ասորոգյալ կոչվում ե նախադասութեան այն անդամը, վոր ցույց ե տալիս, թէ յենթական ի՞նչ ե անում, ի՞նչ ե, ի՞նչպէս ե կամ ի՞նչ ե լինում և այլն. որինակ՝

Լուսիկը կարդում ե:
Վարսիկը ջանասեր ե:
Ձին կենդանի յե:
Ծառը կանաչում ե:

Այս նախադասութիւնների մեջ *կարդում ե*, *ջանասեր ե*, *կենդանի յե* և *կանաչում ե* ստորոգյալներ են:

Ստորոգյալը պատասխանում ե կամ ի՞նչ ե անում, կամ ի՞նչ ե լինում, կամ ի՞նչպէս ե, կամ ի՞նչ ե և նման հարցերին: Ստորոգյալը կարող ե բաղկացած լինել մեկ կամ մի քանի բառերից:

Յեթե ստորոգյալը մեկ բառից ե բաղկացած, կոչվում ե պարզ ստորոգյալ. որինակ՝

Վարսիկը գնաց:

Այս նախադասութեան մեջ գնաց պարզ ստորոգյալ ե, վորովհետեւ բաղկացած ե մեկ բառից:

Մեկից ավելի բառերից կազմված լինելու գեպում ստորոգյալը կոչվում ե բաղադրյալ ստորոգյալ. որինակ՝

Պետիկն աշակերտ ե:

Այս նախադասութեան մեջ աշակերտ ե բաղադրյալ ստորոգյալ ե, վորովհետեւ բաղկացած ե յերկու բառից (աշակերտ և ե):

Բաղադրյալ ստորոգյալը կազմվում ե եմ, ես, ե, եմք, եք,

ե՛ն, եյի, եյիք, եր, եյիք, եյիք — ոճանգակ կոչող — բայի ձևերով և այլ բառերով: Հաճախ ոճանգակ բայը գրվում ե բաղադրյալ ստորոգյալ կազմող բառից կամ նրա լրացումներից առաջ:

Յերբ մի քանի միանման ստորոգյալներ կան, դրանցից միայն մեկն ե ունենում ոճանգակ բայ, իսկ մյուսները չեն ունենում: Այդ նույն ոճանգակ բայը յենթադրվում ե նաեւ նրանց համար. որինակ՝

Ալեքսանն անգուսպ վոխով եր խոսում,
Խայթում Սանթրոսին և նրա տղին:

(Նաիրի Զարյան)

Այս նախադասութեան մեջ ստորոգյալներն են՝ *խոսում եր* և *խայթում*: Թեև *խայթում* ստորոգյալը չունի ոճանգակ բայ, բայց նախորդ ստորոգյալի ոճանգակ բայը յենթադրվում ե նաեւ նրա համար (խայթում եր):

Յերբ նախադասութեան մեջ չի լինում յենթական կամ ստորոգյալը, այդ նախադասութիւնը կոչվում ե բեռի նախադասութիւն. որինակ՝

Մթնեց: Յուրտ ե:

Աշխատել լավ, աշխատել հարվածախորեն — անա որվա յողունգը:

Առաջին և յերկրորդ նախադասութիւնների մեջ չկա յենթական, իսկ յերրորդում չկա ստորոգյալը:

Յեթե նախադասութեան յենթական չկա յեվ չի յենթադրվում, այդ նախադասութիւնը կոչվում ե անենթակա նախադասութիւն. որինակ՝

Մթնեց: Յրաբեց: Լուսացավ և այլն:

Այն նախադասութիւնը, վորը բաղկացած ե միայն յենթականից և ստորոգյալից, կոչվում ե պարզ համառոտ նախադասութիւն. որինակ՝

Լուսը վառվում ե: Ծաղիկը բացվում ե: Գուրգենը գրում ե:

§ 4. ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

Նախադասութեան արտահայտած միտքն ե՛լ ավելի լրացնելու համար, յենթակայից և ստորոգյալից բացի, գործածվում են նաև այլ անդամներ, վորոնք կոչվում են լրացումներ. որինսկ՝

Յերկու մանչուկներ մատղաշ
Նստել են հեվքոտ մոր կողքին:

(Ա. Վ. Ժ. Ժ. Ժ.)

Մանչուկներ՝ յենթակա. նստել են՝ ստորոգյալ. մասդաօ, հեվքոտ մոր կողքին և յերկու՝ լրացումներ:

Լրացում կարող են լինել մի կամ մի քանի բառեր. միասին վերցրած:

Վերևը բերված որինսկում մի լրացում է միայն մասդաօ բառը, մի լրացում են նաև հեվքոտ մոր կողքին՝ յերեք բառերը միասին վերցրած:

Լրացումները լինում են յերկու տեսակ՝ յենթակայի լրացումներ և ստորոգյալի լրացումներ:

1. Այն բառերը, վորոնք լրացնում են յենթական, կլինեն յենթակայի լրացումներ: Սրանք ցույց են տալիս յենթակայի հատկութիւնը, թիվը, պատկանելիութիւնը, վերաբերութիւնը, և այլն. որինսկ՝

Դպրոցի հարվածային աշակերտը խոսում է:

Այս նախադասութեան մեջ առակերք բառը յենթակա յե, խոսում է՝ ստորոգյալ է, իսկ զայրոցի և հարվածային բառերը յենթակայի լրացումներ են:

Ծագում է մանուկ արեւիք զարնան:

Այս նախադասութեան մեջ յենթական է արեւիք, ստորոգյալը՝ ծագում է, իսկ մանուկ (մանուկ արեւ) և զարնան (զարնան արեւ) յենթակայի լրացումներ են:

2. Այն բառերը, վորոնք լրացնում են ստորոգյալը, կլինեն ստորոգյալի լրացումներ: Դրանք ցույց են տալիս, թե ի՞նչ պայմաններում, պարագաներում (տեղ, ժամանակ և այլն), ի՞նչ առարկայի վրա կամ ի՞նչ առարկայի առնչութեամբ է կատար-

վում յենթակայի գործողութիւնը կամ յեղելութիւնը. որինսկ՝

Սակայն շուտով կատարներից հեռանիստ

Արեւն այնտեղ հուր կթափե և վոսկի...

(Վ. Տ. Ե. Ե. Ե.)

Այս նախադասութեան մեջ յենթական է արեւիք, ստորոգյալը՝ կթափե, ստորոգյալի լրացումներն են շուտով (կթափե), կատարներից հեռանիստ (կթափե), այնտեղ (կթափե), հուր յեվ վոսկի (կթափե) բառերը:

Լրացում ունեցող նախադասութիւնը կոչվում է ընդարձակ նախադասութիւն:

Այսպիսով՝ պարզ նախադասութիւնն ունենում է մի յենթակա և մի ստորոգյալ, վորոնցից յուրաքանչիւրը կարող է ունենալ լրացումներ:

Յերե պարզ նախադասութիւնը լրացումներ չունի, կոչվում է համառոտ, իսկ յերե ունի, կոչվում է ընդարձակ:

ՀԱՅՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 5. ԽՈՍԵԼՈՒ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Խոսելու գործողութեանը մասնակցում են հետևյալ որգանները. բերանը (շրթունքներ, առանիք, քիմք, կապիկ, լեզվակ), լեզուն և խոչակը, վոր գտնվում է կոկորդի վերևում: Խոչակի մեջտեղում յերկու կողմից կա մի-մի ծակը, սաղաթի գուլնով: Այդ ծակերը կոչվում են ձայնալարեր: Խոսելիս թոքերից ողն արտաշնչվում է, այսինքն անցնում է խոչակով և դուրս է գալիս բերանով ու ուռնդերով (քթանցքներով): Այդ միջոցին ձայնալարերը կամ հեռանում են, կամ մոտենում են իրար ու թրթռում: Այսպիսով կազմվում է ձայնը: Յերբ արտաշնչվող ողը բերանի խոռոչով անցնելիս արգելքի յե հանդիպում (փակվածքի կամ նեղվածքի), շփվում է բերանի զանազան տեղերին կամ շրթունքներին:

Այդ շփումից առաջանում է աղմուկ:

Ձայնը կամ աղմուկը կամ յերկուսը միասին ստանում են այս կամ այն յերանգը ընդհանի և քթի խոռոչում:


Այդ յերանգն է, վոր հասարակական գիտակցության մեջ ըմբռնվում է վորպես լեզվի ամենափոքր տարր և կոչվում է **հնչյուն**:

Բառը բաղկացած է մեկ կամ մի քանի հնչյուններից. որինակ՝

Դու քո դասը սովորեցիր:

Այս նախադասության մեջ զուր բաղկացած է յերկու հնչյունից, քո՝ նույնպես յերկու, դասը՝ չորս, իսկ սովորեցիր՝ ինը:

Հնչյունների արտասանության ժամանակ մեծ դեր է կատարում լեզուն. նա յերբեմն դիպչում կամ խիստ մոտենում է քիմքի այս կամ այն տեղին (գ, դ, ջ), յերբեմն ել՝ առամենքին (դ, ձ, ս) և արտաբերված ձայնը կամ աղմուկը դառնում է հնչյուն: Լեզուն կարող է դիպչել կամ ծայրի մասով, և կամ հետևի մասով (դ, գ): Շրթունքները մերթ կաշում են միմյանց և ապա հեռանում, մերթ բաց են փնում, մերթ առաջ են մղվում, և այսպիսով ստացվում են նույնպես զանազան հնչյուններ (որինակ՝ բ, ա, ու):



ե—երուն, օվ—օնչափող, ա—ասաներ, ֆու—ֆիսի օտրական մաս, ձլ—ձայնալարեր:

§ 6. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Հնչյունները լինում են յերկու տեսակ ձայնավոր և բազմայն:

Ձայնավոր կոչվում են այն հնչյունները, վորոնք կազմված են ձայնից յեվ արտասանվում են առանց զգալի արգելի. որինակ՝ ա, ի, ու:

Բաղաձայն կոչվում են այն հնչյունները, վորոնք կազմված են ձայնից յեվ աղմուկից կամ միայն աղմուկից յեվ

արտասանվում են արգելիով (նեղվածք կամ փակվածք). որինակ՝ բ, գ, դ, զ, ք, ժ:

Գրական հայերենում ունենք վեց ձայնավոր (ա, ե, ի, ու, ը) և քսանինը բաղաձայն (բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, ն, շ, չ, պ, Վ, ու, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ):

Հայերենն ունի նաև 3 հնչյունը, վոր հանդես է գալիս մերթ իրեն բաղաձայն, մերթ իրեն կիսաձայն:

1. Բաղաձայնները իրենց արտաբերման տեղի համաձայն բաժանվում են հետևյալ տեսակների.

ա) Շրթնային՝ բ, պ, ֆ. այդպես են կոչվում այդ հնչյունները, վորովհետև արտասանվում են շրթունքներով:

բ) Շրթնա-ասամնային՝ վ, ֆ. այդպես են կոչվում այդ հնչյունները, վորովհետև արտասանվում են շրթունքի և առամենքի հպումով:

գ) Առասնալեզվային՝ դ, ռ, ք, ձ, ծ, ց, ջ, ց, ժ, ց, գ, ս, լ, ր, ու. այդպես են կոչվում այդ հնչյունները, վորովհետև արտասանվում են լեզվի առաջի մասով:

դ) Հետնալեզվային՝ գ, կ, ք, դ, խ. այդպես են կոչվում այդ հնչյունները, վորովհետև արտասանվում են լեզվի հետևի մասով:

ե) Ռեզային՝ մ, ն. այդպես են կոչվում այդ հնչյունները, վորովհետև նրանց արտասանության ժամանակ ձայնն անցնում է քթի խոռոչով (ռուզերով):

զ) Նուկորդային՝ հ. այդպես է կոչվում այդ հնչյունը, վորովհետև արտասանվում է կոկորդով, իրեն պարզ շունչ:

2. Բաղաձայններն ըստ ձայնի և աղմուկի չափի բաժանվում են հետևյալ տեսակների.

ա) Ձայնեղ՝ բ, գ, դ, զ, թ, ժ, լ, ձ, ղ, մ, յ, ն, Վ, ու, ր. այդ հնչյունները կոչվում են ձայնեղ, քանի վոր նրանց արտասանության ժամանակ ձայնալարերը թրթռում են, վորից ձայն է ստացվում:

բ) Խուլ՝ խ, ծ, կ, հ, ձ, շ, պ, ս, տ, ֆ. այդ հնչյունները կոչվում են խուլ, վորովհետև արտասանության ժամանակ ձայնալարերը չեն մասնակցում, այլ միայն արտասանական գործարանները, վորոնց շփվելով արաաշնչվող ողը տալիս է այդ հնչյունները:

դ) ՇՆՃԵՂ ԽՈՒՂ՝ Թ, Հ, Գ, Փ, Զ. այդ հնչյունները կոչվում են շնչեղ ԽՈՒՂ, վորովհետև դրանք լինելով ԽՈՒՂ ունեն իրենց հետ նաև մի շունչ (հ)։

Հնչյունը գրվում է ընդունված նշանով, վոր կոչվում է ՏԱՈՒ։

Տառերի ավանդական շարքը առաջին լերկու տառի անուշով կոչվում է այբբեն կամ այբուբեն։

Հայերենն ունի յերկու այբուբեն՝ հին և նոր։

1. Հին այբուբեն, ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, յ, ն, ժ, ռ, ջ, պ, շ, ու, ս, վ, զ, ր, ց, լ, փ, ք, (և, օ, և)։

Հին այբուբենը գործ էր ածվում մինչև 1922 թ. մարտի 4-ը, նոր ուղղագրություն մտցնելը. այժմ հին այբուբենը գործ է ածվում թվարկության համար՝ ա) — առաջին, բ) — յերկրորդ, գ) — յերրորդ, դ) — չորրորդ, ե) — հինգերորդ, զ) — վեցերորդ, լ) — յոթներորդ և այլն. կամ ա—1, բ—2, գ—3, դ—4, ե—5, զ—6, լ—7, ը—8, թ—9, ժ—10, ի—20 և այլն։

2. Նոր այբուբեն. ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, յ, ն, ժ, ռ, ջ, պ, շ, ու, ս, վ, զ, ր, ց, ու, փ, ք, և։

Սրանցից գուրս կա նաև «և» գիրը, վոր արտահայտում է լեզվ յեռահնչյունը. «և» գիրը գրվում է բառամիջում և բառավերջում ձայնավորից հետո, ինչպես նաև առանձին՝ իբրև շաղկապ. որինակ՝

Միևնույն, նաև, թեև, յես և դու։

Բառամիջի և բառավերջի եզր կապակցությունը կարելի չէ գրել թե եզր և թե և. որինակ՝ արև—արեւ. տերև—տերեւ. յերևում ե—յերեւում ե։

Տառերը լինում են լերկու տեսակ՝ մեծատառ (գլխատառ) և փոքրատառ։

Մեծատառ. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Թ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Մ, Յ, Ն, Ծ, Ո, Չ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Բ, Յ, ՈՒ, Փ, Զ, Ֆ։

Փոքրատառ. ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, յ, ն, ժ, ռ, ջ, պ, շ, ու, ս, վ, տ, բ, ց, ու, փ, ք, ֆ։

Հայերեն տառերն ունի հետևյալ տեսակները։

1. Յերկարագիր (կամ գլխագիր, գլխատառ). Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Թ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Մ, Յ, Ն, Ծ, Ո, Չ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Տ, Բ, Յ, ՈՒ, Փ, Զ, Ֆ։

2. Բարձրագիր. ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, յ, ն, ժ, ռ, ջ, պ, շ, ու, ս, վ, տ, բ, ց, ու, փ, ք, ֆ։

3. Շեղագիր. ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, մ, յ, ն, ժ, ռ, ջ, պ, շ, ու, ս, վ, տ, բ, ց, ու, փ, ք, ֆ։

4. Նոսրագիր։

ՊԲԳԵԴԶԸԹԻԽԼԽԾԿՀՁՂՄՅՆԾՈՉՊԶՐՍՎՏԲՅՈՒՓԶՖ

ՀԶՈՆՍՊԸՆՍՎՊԲՅՓԴՖՈՒ

§ 7. ՎԱՆԿ

Վանկ կոչվում է հնչյունը կամ մի բանի հնչյունների միացությունը, վոր արտաբերվում է մի զննով. որինակ՝ տուն, կա—տու, ա—շա—կերտ։

Մի ձայնավորն առանձին կարող է մի վանկ կազմել. որինակ՝ ու—տու—ցիչ բառի առաջին վանկը միայն մի ձայնավոր է՝ ու. ա—տա—կերտ բառի առաջին վանկը նույնպես միայն մի ձայնավոր է՝ ա։ Իրան հակառակ, նույն բառերի յերկրորդ վանկերը բաղկացած են յերկուական հնչյուններից, վարոնցից մեկը բաղաձայն և մյուսը ձայնավոր (տու և տա). յերրորդ վանկերը բաղկացած են յերեք և չորս հնչյուններից (ցիչ և կերտ), մեկը ձայնավոր, մնացածը բաղաձայն։ Նշանակում է՝ յուրաքանչյուր վանկ պետք է ունենա մի ձայնավոր, իսկ բաղաձայնները կարող են մեկից ավելի լինել, կամ բնավ չլինել։

Բառերը լինում են միավանկ և բազմավանկ։

Միավանկ կոչվում են մեկ վանկ ունեցող բառերը. որինակ՝ տուն։

Մեկից ավելի վանկեր ունեցող բառերը կոչվում են բազմավանկ. որինակ՝ կա—տու, Պետ—րոս, տետ—րակ, պա—

—տու—հան, ա—շա—կերտ, հար—վա—ծա—յին, պա—տաս—
—խա—նա—տու, պա—տաս—խա—նա—տը—վու—թյուն:

Բաղաձայնով վերջացող վանկը կոչվում է փակ վանկ. ուրիշակ՝ ետ—րակ:

Ձայնավորով վերջացող վանկը կոչվում է բաց վանկ. ուրիշակ՝ կա—տու:

§ 8. ՀԱՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառերի փոփոխություն ժամանակ, յերբ վերջին վանկի շեշտը անցնում է հաջորդ նոր ավելացած վանկին, պատահում է, վոր ա, ի, ու, ե արմատական ձայնավորները, յա և ույ յերկնչյունները փոփոխություն են կենթարկվում: Այս կերևույթը կոչվում է հնչյունափոխություն:

Հայերենում կան հնչյունափոխության հետևյալ դեպքերը.

1. Առ ձայնավորը

ա) փակ վանկում փոխվում է ը ձայնավորի. ուրիշակ՝ շուր—ջրի—ջրկիր. տուն—տնակ—տնվոր. մուկ—մկան—մկնդի. ծուկ—ծկան—ծկնորս և այլն:

բ) բաց վանկում դառնում է վ. ուրիշակ՝ լեզու—լեզվի—լեզվաբան. կատու—կատվի—կատվախաղ. լու—լվի—լվածաղիկ և այլն:

գ) կամ մնում է անփոփոխ. ուրիշակ՝ ութ—ութսուն—ութսունական. ուղտ—ուղտի—ուղտապան. ուրու—ուրույի—ուրվական և այլն:

դ) կամ սղվում է, դուրս է ընկնում. ուրիշակ՝ անասուն—անասնական—անասնի. հատուկ—հատկու—թյուն և այլն:

2. Ի ձայնավորը փակ վանկում.

ա) փոխվում է ը ձայնավորի. ուրիշակ՝ կիր—կրի—կրա—շուր. գիր—գրի—գրավոր. սիրտ—սրտի—սրտոտ և այլն:

բ) կամ սղվում է. ուրիշակ՝ գրիչ—գրչի—գրչակոթ. ամիս—ամսի—ամսաթիվ. ճահիճ—ճահճի—ճահճային և այլն:

Ի ձայնավորը բաց վանկում հաջորդ ձայնավորից առաջ յերբեմն սղվում է, յերբեմն ել ա ձայնավորին (հոդակապ) միա—նալով դառնում է յա, ուրիշակ՝

թշնամի—թշնամական. բարի—բարություն—բարյացա—կամ. վորդի—վորդյակ. հոգի—հոգյակ և այլն:

Բաց միավանկ և բաց վանկով վերջացող մի շարք բաղադրանի բառեր չեն կենթարկվում վերոհիշյալ կանոնին և ի ձայնավորը մնում է անփոփոխ. ուրիշակ՝

ծի—ծիավոր. մի—միակ. դի—դիակ. գյուղացի—գյուղա—ցիական և այլն:

3. Ե ձայնավորը.

ա) մեծ մասամբ չի փոխվում. ուրիշակ՝

գետ—գետի—գետառ. բերդ—բերդի—բերդաբաղաք. հա—յերեն—հայերենի—հայերենագետ. յեղեգն—յեղեգնի—յեղեգնիկ և այլն:

բ) կամ փակ վանկում դառնում է ի. ուրիշակ՝

կես—կիսել—կիսատ. պարտեզ—պարտիզի—պարտիզական և այլն:

Այս դեպքում է ձայնավորը կարող է նաև մնալ. ուրիշակ՝ կես—կեսի (կամ կիսի). ներսես—ներսեսի:

4. Յա յերկնչյունը դառնում է ե. ուրիշակ՝

պաշտոնյա—պաշտոնեյություն. մատյան—մատենալար—գործունյա—գործունեություն և այլն:

5. Այս յերկնչյունը փակ վանկում

ա) դառնում է ա. ուրիշակ՝

թույլ—թուլակազմ. բույր—բուրավետ. բույս—բուսա—կան. լույս—լուսավոր և այլն:

6. Պա ձայնավորը սղվում է հազվագյուտ դեպքերում. ուրիշակ՝

քաղաք, քաղքենի. ամառ, ամռան:

§ 9. ՏՈՂԱԴԱՐՁ

Գրելու ժամանակ, յերբ բառն ամբողջությամբ չի տեղափոխվում տողում, բառի մի մասը տարվում է հաջորդ տողի սկիզբը. այդ կոչվում է տողադարձ:

Տողադարձի համար բառը բաժանում ենք վանկերի, ապա վանկերից մեկը կամ մի քանիսը թողնում տողի վերջում, իսկ մնացածը փոխադրում հաջորդ տողը: Միավանկ բառերը չեն տողադարձվում: Տողադարձի նշանը (~) կոչվում է յեքրամհա:

1. Յերբ լերկու ձայնավորի միջև կա միայն մի բաղա-
ձայն, առաջագրվի ժամանակ անցնում է հաջորդ տողը. իսկ յի-
թե մեկից ավելի բաղաձայններ կան, հաջորդ տողն անցնում է
միայն վերջին բաղաձայնը, իսկ մնացած բաղաձայնները մնում
են նախորդ տողի վերջում. որինակ՝

Կա-րո, լա-վա-նալ, աա-րա-ծել, հաա-նել, կար-դալ,
գան-գատ-վել, արթ-նա-նալ, Աատ-դիկ, յերկ-րային:

2. Տողագրվի ժամանակ՝ լավող, բայց չգրվող ք ձայնա-
վորը գրվում է թե՛ տողի վերջին վանկում և թե՛ հաջորդ տողի
առաջին վանկում. որինակ՝

Գը—լուխ, տեա—նը—վել, մա—քըը—վել, Մը—կըը—ախ
և այլն:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

§ 10. ԲԱՌ ՅԵՎ ԲԱՌԱԿԱՆԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառ առելով հասկանում ե՞մք հնչյունների այնպիսի
միացություն, վոր իմաստ ունի. որինակ՝ սեղան բառ է, վո-
րովհետև հնչյունների միացություն է, վոր իմաստ ունի, իսկ
գետան բառ չէ, վորովհետև՝ թեև հնչյունների միացություն է,
բայց իմաստ չունի:

Քերականության այն մասը, վորը սովորեցնում է բառեր
կազմելու ձևվերը, կոչվում է բառակազմություն:

Բառերը կարող են կազմված լինել հետևյալ մասերից. առ-
ժառ և ածանց, հիմք և վերջավորություն:

§ 11. ԱՐՄԱՏ

Բառը, կամ բառի այն մասը, վոր աղեկվա չի բաժանվում
բաղադրի, մասերի յեվ բառի հիմնական իմաստն է արտահայ-
տում, կոչվում է արմատ. որինակ՝

մարդ—իկ, մարդ—կային, մարդ—կուլթյուն, տ—մարդ—ի,
առ—մարդ—ավարի բառերի մեջ մարդ բառն արմատ է, վորով-
հետև մասերի չի վերածվում և արտահայտում է այդ բառերի
հիմնական իմաստը:

Կարգ—ալ, կարգ—ացած, կարգ—ացող, կարգ—ացել,
կարգ—ում բառերի կարգ մասը չի բաժանվում բաղադրիչ մա-

սերի, արտահայտում և բառերի հիմնական իմաստը, ուրեմն ար-
ձատ է:

Արմատներից շատերը գործ են ածվում վորպես առանձին
բառեր. դրանք կոչվում են պարզ կամ արմատական բառեր.
որինակ՝

բակ, մայթ, տուն, արել, ծառ և այլն:

Կան այնպիսի արմատներ, վորոնք առանձին չեն գոր-
ծածվում և բառ են կազմում միայն մասնիկներ ստանալով, կամ
միանալով ուրիշ արմատի հետ. որինակ՝

հի—անալ, հի—ացում, հի—աքանչ. դրանց արմատն է
հի (վերջին բառում նաև՝ սքանչ), վոր առանձին չի գործած-
վում. հն—ոց բառի արմատն է հուհ, վոր նշանակում է կրակ,
բայց առանձին չի գործածվում, կարգալ բառի արմատն է
կարգ, վոր առանձին չի գործածվում և այլն:

§ 12. ԱՇԱՆՑ

Այն մասնիկը, վոր ավելանալով արմատի կամ բառի
վրա փոխում է նրա իմաստը, կոչվում է ածանց. որինակ՝

Ոց.—Դարըն—ոց, հյուան—ոց, մասն—ոց յեվ այլն:

Ուրյուն.—Մի—ուրյուն, ընկեր—ուրյուն, գյուղացի—ու-
րյուն յեվ այլն:

Այիհ.—Ածխ—այիհ, հարված—այիհ, բանակ—այիհ և այլն:

Եղեհ.—Մրգ—եղեհ, վոսկ—եղեհ, արծաթ—եղեհ, լուս—
եղեհ յեվ այլն:

Սն.—Սն—տուն, ահ—ցանկալի, ահ—բախտ յեվ այլն:

Արս.—Արս—ա—դրել, արս—ա—հանել, արս—ա—դարո-
ցական յեվ այլն:

Ածանց ունեցող բառերը կոչվում են ածանցավոր բառեր:
Հայերենում ածանցները լինում են յերկու տեսակ՝ նա-
խաձանց և վերջաձանց:

§ 13. ՆԱԽԱԶՄԱՆՑՆԵՐ

Նախաձանց են կոչվում այն ածանցները, վորոնք գրվում
են բառի սկզբին: Հայերենում կան բավական թվով նախա-
ձանցներ, վորոնցից են.

Ընդ.—Ընդհանուր, ընդդեմ, ընդարձակ, ընդունել, ընդու-
նելություն, ընդունակ և այլն:

8893
0101

ՄԻՏ (նշանակում է «դուրս»)։ — ՄԵՏԱՆՈՒԹՅՈՒՆ, արժադրել, արժանչել, արժանկարել, արժատպել, արժոնություն, արժասանել և այլն.

ԲԱԳ (նշանակում է «հեռու, մի կողմ»)։ — ԲԱԳԱԿԱՅԵԼ, բացառություն, բացառել և այլն.

ԳԵՐ (նշանակում է «վեր, բարձր»)։ — ԳԵՐԱԳՆԱՆՈՒԹԵԼ, գերաճել, գերակատարել, գերմարդ, գերխշխանություն, գերածախս, գերհարվածային, գերբնական և այլն.

ՀԱԿ (նշանակում է «հակառակ»)։ — ՀԱԿԱԿԱՐԵԼ, հակասել, հակառակել, հակոտնյա, հակահարված, և այլն.

ՀԱՄ (նշանակում է «նույն, միևնույն»)։ — ՀԱՄԱԴՈՐ, համալելու, համադասել, համաձայնել, համադրուղացի, համամիտ, համընթաց և այլն.

ՀԱՄ (նշանակում է «վողջը, բոլորը, ամենը»)։ — ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ, համամիութենական, համամարդկային, համաշխարհային, համատարած, համալսարան, համագումար և այլն.

ՄԱԿ (նշանակում է «վրա»)։ — ՄԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ, մակբայ, մակերես, մակընթացություն և այլն.

ՅԵՆՔ (նշանակում է «տակ»)։ — ՅԵՆՔԱՐԿԵԼ, յենքադրել, յենքակա, յենքակայան և այլն.

ՆԵՐ (նշանակում է «ներս»)։ — ՆԵՐԳՈՐԾԵԼ, ճերգրավել, ճերառյալ, ճերխուծել, ճերգաղթել, ճերգրում և այլն.

ՊԱՐ (նշանակում է «շուրջը, շուրս կողմը»)։ — ՊԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ, պարագիծ, պարփակել, պարունակել և այլն.

ՎԵՐ (նշանակում է «կրկին, նորից»)։ — ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ, վերանայել, վերանորոգել, վերահաստատել, վերամշակել, վերլուծել, վերադառնալ և այլն.

ՎԵՐ (նշանակում է «վրա, վեր»)։ — ՎԵՐԱՐԿԵԼ, վերակացու, վերահասու, վերադիր, վերահսկել, վերալաց և այլն.

ՍԵ — ՍԵՄՈՒՆ, անպետք, անպատճառ, անտարբեր, անդատարգ և այլն.

ՍԱՅ. — ՍԱՅՆՈՐԻ, ապերախտ, ապուշ և այլն.

Տ. — ՏՆԱՃ, ճգնա, ճգեղ, ճմարդի և այլն.

ԴԺ. — ԴԺԵՐԱԽՈՒՄ, զգո՛ւ և այլն.

Զ. — ԶՈՒՍ, չխոսկան, չգիտություն և այլն.

ՍԵ, ապ, օ, զժ, և կոչվում են բացասական կամ միասական նախածանցներ:

§ 14. ՎԵՐՉԱԾԱՆԵՆԵՐ

Մեր լեզվի մեջ ավելի առատ են վերջածանցները, ունենք հարյուրից ավելի վերջածանցներ, վորոնցից են.

ԱԿ (լճակ), ԱԿԱՆ (պրոլետարական, կոմունիստական), ԱՅԻՆ (հարվածային, ողային), ԱՏ (գունատ), ԱԲԱՐ (ընկերաբար), ԵՂ (համեղ), ԵՂԵՆ (վսեղեղեն), ԵՆԻ (մայրենի), ԲՈՐԳ, ԵՐՈՐԳ (յերկրորդ, հինգերորդ), ԻԿ (փոքրիկ), ԻՅ (ուսուցիչ), ԿՈՏ (փութկոտ), յԱ (փայտյա), յԱԿ (հնգամյակ), յԱՆ (լենինյան), յՈՒՆ (հնչյուն), յՈՅ (խշխշոց, դպրոց), ՈՐԳ (առաջնորդ), ՈՐԵՆ (լայնորեն), ՈՐՅՈՒՆ (կուսակցություն), ՈՒԽԻ (ընկերուհի), ՈՒՆ (սահուն), ՈՒԿ (տաքուկ), ԱԿԵԱ (իրապես), ԱՏԱՆ (Հայաստան), ԱՎԵՏ (հոտավետ), ՎՈՐ, ԱՎՈՐ (բանվոր, հոշակավոր), ԳԻ, ԱԳԻ (յերեանցի, գյուղացի), ԱԳՈՒ (վարպետացու, սերժացու), Բ (խոսք, վոտք, պետք, աչք),

§ 15. ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Բարդ կոչվում են այն բառերը, վորոնք կազմված են լիցում յերկու յեվ ավելի բառերից կամ արմատներից:

Բարդ, ինչպես և ածանցավոր բառերը կարող են նույնպես բարդվել կամ ածանցվել Բարդություն կազմող բառերից սովորաբար վերջինն արտահայտում է բարդ բառի հիմնական իմաստը: Բարդ բառերի մասին պետք է հիշել հետևյալը.

1. Բարդ բառի մեջ առաջին բաղադրիչ բառը լինում է յերկրորդի լրացում. որինակ՝

գրասխախակ—գրելու տախտակ. մրցախրավեր—մրցության հրավեր.

մարդասեր—մարդ սիրող. չափահաս—չափի հասած.

յերկրաբույս—յերկրից բուսած. ձյունապատ—ձյունով պատած.

ճնաբույս—տանը բուսած. խավարաբնակ—խավարում բնակվող և այլն:

2. Բարդության յերկրորդ բաղադրիչ մասերը սովորաբար միացվում են ա ձայնավորով, վոր կոչվում է հոգակապ. որինակ՝

մարդ—ա—նման, խոշոր—ա—ցույց, դեկ—ա—վար, մի—
—ա—ծայն և այլն:

3. Յերբ բարդվող բառերից չերկրորդն սկսվում է ձայնա-
վորով, հոգակապ չի գրվում. որինակ՝

Ընթացավարս. հանրագուս, զուգընթաց, դյուրըմբռնելի
և այլն:

4. Իբրև բացառություն ա հոգակապը գրվում է ամեն
բառից հետո, յերբ հաջորդում է նաև ձայնավորով սկսվող
բառ. որինակ՝

ամենազնիվ, ամենաընտիր, ամենաողտակար և այլն:

5. Հաճախ, յերբ առաջին բառը վերջանում է ի ձայնավո-
րով, այս ի ձայնավորը միանալով ա հոգակապի հետ, դառ-
նում է ե. որինակ՝

գինի—ա—տուն՝ գինետուն. բարի—ա—կամ՝ բարեկամ.
շոգի—ա—քարշ՝ շոգեքարշ և այլն:

6. Յերբ առաջին բառը վերջանում է ա ձայնավորով, վեր-
ջինս ա հոգակապի հետ միասին առաջիս և վա վաճկը. որինակ՝

ծու յեվ կեր—ծվակեր. կատու յեվ խաղ—կատվախաղ.
չու յեվ ցուցակ—չվացուցակ և այլն:

7. Կան բազմաթիվ բարդություններ, վորոնք կազմված են
առանց հոգակապի. որինակ, հացթուխ, ջրվեժ, ջրմուղ, քարտաշ,
բանբեր, ջրկիր, քարկոծ, ձեռնպահ, ծծմայր, արևմուտք,
ծնծաղիկ, ձեռնհաս և այլն:

8. Վորոշ թվով բարդ բառեր կազմվել են համադաս բա-
ռերից: Այդ բարդ բառերից մի քանիսն ունենում են կամ ու
կամ և շաղկապը վորպես միացնող. որինակ՝

կերուխում, անցուղարծ, բացուխովի, յերթեկուլություն,
առևտուր, և այլն:

Յերբ բարդ բառն ստացում է ածական, կոչվում է բարդ
ածական:

Որինակ՝ գրավարժ—ություն, հեռատես—ություն, ան—
մարդաբնա—կուլություն, ան—պատասխանատվ—ություն և այլն:

§ 16. ՀԱՐԱԴԻՐՆԵՐ

Հարադիրներ կոչվում են այն բառերը, վորոնք գրվում են
անշատ և ըմբռնվում են իբրև մի իմաստ արտահայտող բառեր.
որինակ՝

թույլ տալ (թույլավություն), պար զալ (պարել), քարշ
տալ (քաշել), տակն ու վրա (ավերել), ցիր ու ցան (բոլորովին
ցրել տալ), և այլն:

Վորոշ թվով հարադիր բառերի տրանքում գրվում է մի-
ացման գիծ. որինակ՝

Գիշեր-ցերեկ, յերեք-չորս, հիսուն-վաթսուն, կանաչ-կար-
միր, վոլոր-մոլոր, պարապ-սարապ, առոք-փառք, լեւի-լեւ-
ցուն, փունջ-փունջ և այլն:

§ 17. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Բարդության մի տեսակն են կազմում նորագույն հաղա-
վումները: Պրոլետարական հեղափոխությունից հետո բարդու-
թյան այդ տեսակը խիստ տարածվեց հասկապես այն պատճա-
ռով, վոր խոսելիս՝ դրանով անտեսվում եր ժամանակը, և գրե-
լիս՝ խնայվում տեղը: Վորոշ թվով հաղավումներ հետադարձ
ըմբռնվեցին վորպես առանձին տերմիններ (որին՝ Զազա):

Նորագույն հաղավումները կազմվում են հետևյալ յեղա-
նակներով.

1. Առաջին բառի կամ բառերի սկզբնամասով և վերջին
ամբողջ բառով. որինակ՝

Լուսաբաժին—Լուսավորության Բաժին:

Պետոպերա—Պետական Ոպերա. խնայդրամարկը—խնա-
յողական դրամարկը. կոլտնտշուկա—կոլտնտեսական շուկա և
այլն:

2. Բառերի սկզբնամասերով. որինակ՝

Ժողկոմխորհ—Ժողովրդական Կոմիտեների խորհուրդ.

Լուսժողկոմատ—Լուսավորության Ժողովրդական Կոմի-
տեի ատ.

Կենտգործկոմ—Կենտրոնական Գործադիր Կոմիտե և այլն:

3. Բառերի սկզբնամասերով. այս դեպքում յեթե հաղավ-
ող բառերը հասարակ անուններ են, հաղավումը գրվում է
փոքրատառով, իսկ յեթե հատուկ անուններ են (հիմարիու-
թյան անուն, պետության անուն և այլն), գրվում է մեծատա-
ռով. որինակ՝

բուհ—բարձրագույն ուսումնական հիմնարկ.

ՍՄՆ—Ամերիկայի Միացյալ Նահանգներ.

ՀԱՄԽ—Հայաստանի Արհեստակցական Միություններին
Խորհուրդ։

ԽՍՀՄ—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միություն։

ՀԼԿՅԵՄ—Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերի-
տասարդական Միություն և այլն։

§ 18. ՀԻՄՔ ՅԵՎ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բառերը նախադասության մեջ միշտ չեն պահում իրենց
հիմնական ձևը, այլ համաձայն ունեցած դերի կամ բառերի հետ
ունեցած առնչության՝ կրում են վորոշ փոփոխություն։ Այդ
փոփոխությունը լինում է գլխավորապես կամ վերջից զանա-
զան վերջավորություններ ստանալով և կամ վերջին վանկի
ձայնավորը փոփոխվելով։ Այդ փոփոխությունները կոչվում են
թեքում։ որինակ՝

սեղան, սեղան — ից, սեղան — ցերով։

գրեցի, գր—իւ, կարդացեմ, կարդա—ս, կարդաց—ի և այլն։
Թեքման տեսակներն են հոլովում և խոնարհում։

Հոլովված կամ խոնարհված յուրաքանչյուր բառ բաղկա-
ցած է յերկու մասից՝ հիմքից և վերջավորությունից։

Վերջավորությունները հոլովման կամ խոնարհման նշան-
ներն են։

Յերբ բառից հանում ենք վերջավորությունը, մնում է
հիմքը, որինակ՝ քարի, քարից, քարով բառաձևերի հիմքն է քար-
վերջավորություններն են՝ ի, ից, ով։

քարաւի, քարաւից, քարաւով բառաձևերի հիմքն է
քարաւ, վերջավորություններն են՝ ի, ից, ով։

Հիմք կարող են լինել թե պարզ, թե բարդ և թե ածանցա-
վոր բառերը։

§ 19. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ ԿՈՂՄԻ

Բառերն ըստ իմաստի լինում են հույճանիւ, հակաճիւ,
համանիւ և համանուն։

1. Նույճանիւ կոչվում են այն բառերը, վորոնք իմաստով
նույնն են, որինակ՝

Այտ—թուշ, շրթունք—շուրթ, գնալ—յերթալ, մազ—հեր-
վարս, յերես—դեմք, պատուհան—լուսամուտ, անիվ—ակ,
վանառել—ծախել, վախ—յերկյուղ և այլն։

2. Համանիւ կոչվում են այն բառերը, վորոնք նշանա-
կությամբ խիստ մոտիկ են, բայց նույնը չեն և նուրբ տարբե-
րություն ունեն միմյանցից, որինակ՝

սքանչանալ—հիանալ, շինել—կառուցել, վերջ—վախճան,
մտցնել—մուծել, մուծ—խավար, ծի—յերիվար—նժույզ և այլն։

3. Համանուն կոչվում են այն բառերը, վորոնք ձևով
նույնն են, բայց նշանակությամբ տարբեր, որինակ՝

Այր (մարդ), այր (քաբայր), փող (դրամ), փող (խողո-
վակ), սեր (կաթի սեր), սեր (սիրելի), հոտ (բույր), հոտ (վոչ-
խարների խումբ) և այլն։

4. Հականիւ կոչվում են այն բառերը, վորոնք իմաստով
միմյանց հակադիր են, որինակ՝

հաստ—բարակ, յերկար—կարճ, մեծ—փոքր, լույս—խա-
վար և այլն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 20. ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Բառերն առանձին վերցրած ցույց են տալիս առարկա, ա-
ռարկայի հատկություն, քանակ, գործողություն և այլն։ Բառե-
րի տեսակները վորոշվում են ըստ նրանց նշանակության, յեր-
բմն ել ըստ նրանց գործածության և կոչվում են խոսքի մասեր։

Խոսքի մասերը 9-ն են՝ գոյական, ածական, թվական, գե-
րանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, ձայնարկություն։

Խոսքի մասերից 6-ը՝ գոյական, ածական, թվական, գե-
րանուն, բայ, մակբայ՝ նախադասության անդամներ են դառնում։
Կապը և շաղկապը կապող բառերի դեր են կատարում, իսկ
ձայնարկությունը նախադասության կառուցման մեջ դեր չի
խաղում, բայց նախադասությանը մի առանձին յերանդե տալիս։

ԳՈՅԱԿԱՆ

§ 21. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Գոյական եւ կոչվում առարկա ցույց տվող բառերը։
Գոյականները պատասխանում են ո՞վ կամ ի՞նչ հարցին.
որինակ՝

Փայտ (խնչ), սեղան (խնչ), մատիտ (խնչ), ուսուցիչ (սվ), աշակերտ (սվ) և այլն:

1. Գոյականները լինում են հասարակ և հատուկ:

Հասարակ է կոչվում այն գոյականը, վաճառվում է իբրև անուն միեվնույն սեռակի առարկաներից յուրաքանչյուրին. որինակ՝

մարդ, աղջիկ, տղա, քաղաք, սար, յերկիր, մատիտ, գրիչ, զիրք և այլն:

Հատուկ է կոչվում այն գոյականը, վաճառվում է իբրև անուն միեվնույն սեռակի առարկաներից մէկի մեկին՝ մյուսներից զանազանելու համար. որինակ՝

Սուրեն, Աստղիկ, Արամ, Յերեման, Մասիս, Հայաստան, Բուռ և այլն:

Հատուկ անուններ են բոլոր մարդկանց, քաղաքների, գյուղերի, լճերի, յերկրների, ծովերի, հիմնարկների, կաղամակերաւթյունների, գործարանների, կոլտնտեսությունների անունները, նաև կենդանիներին տրված անունները:

Հատուկ չեն այն առարկաների անունները, վորոնք մի հաս են, յեղակի չեն. որինակ՝ արեւ, լուսին, յերկինք, յերկրագունդ և այլն:

2. Նախադասության մեջ գոյականները լինում են թե՛ յենթակա, թե՛ ստորոգյալ և թե՛ լրացում. որինակ՝

Աշակերտը գնաց դպրոց (այս նախադասության մեջ աշակերտ գոյականը յենթակա չէ):

Կիմիկն աշակերտ է (այս նախադասության մեջ աշակերտ գոյականը ստորոգյալ է կաղմում):

Ուսուցիչը գովում է իր առաջադեմ աշակերտին (այս նախադասության մեջ աշակերտ գոյականը լրացում է):

3. Գոյականները նախադասության մեջ լրացում դառնալու համար (իմաստն ամբողջացնելու համար) ստանում են զանազան վերջավորություններ: Այս վերջավորությունները ցույց են տալիս գոյականի պաշտոնը նախադասության մեջ՝ այն իմաստը, վորով տվյալ գոյականը կաղվում է նախադասության մյուս անդամների հետ և ամբողջացնում նախադասությամբ արտահայտվող միտքը:

Որինակ՝ ուսուցիչը գնահատում է ջանասեր աշակերտ

Նախադասության մեջ միտքը չի լրանում, մինչդեռ՝ ուսուցիչը գնահատում է ջանասեր աշակերտին նախադասության մեջ միտքն ամբողջանում է: Այս նախադասության մեջ ին վերջավորությունը ցույց տվեց, վոր աշակերտ գոյականն արտահայտում է այն առարկան, վորին վերաբերում է ուսուցիչի գնահատելու գործողությունը, այսինքն աշակերտին բառը ստորոգյալի լրացումն է:

Մեկ ուրիշ որինակ. Կիմիկը հեռացավ Արամից նախադասության մեջ ից վերջավորությունը ցույց է տալիս, վոր Կիմիկի կատարած գործողությունն սկսվում է Արամի մոտից:

Յեթե ից վերջավորությունը կցենք Կիմիկ գոյականին, կստացվի Կիմիկից հեռացավ Արամը, այսինքն Արամի գործողությունն սկսվում է Կիմիկի մոտից:

4. Այսպիսով՝ նախադասության մեջ գոյականներն ստանում են զանազան վերջավորություններ, վորոնցով վորոշվում է, թե՛ սկսվալ գոյականը նախադասության մեջ ի՞նչ դեր ունի յեվ ի՞նչպես է ամբողջացնում նախադասության արտահայտած միտքը:

Վորոշ դեպքերում գոյական անունը թեև չի ստանում վերջավորություն, բայց տեղով և կիրառությամբ արտահայտում է իր պաշտոնը. որինակ՝

Յես մի առակերս տեսա: Մեակերս բառը լրացում է, թեև վերջավորություն չունի:

§ 22. ՀՈՒՈՎՈՒՄ

Գոյականի այն փոփոխումը, վորով արտահայտվում է գոյականի պատշոնը նախադասության մեջ, կոչվում է հոլովում:

Բառի հոլովման յուրաքանչյուր ձևը կոչվում է հոլով:

Հայերենում գոյականներն ունեն յոթը հոլով. ուղղական, սեռական, տեսական, հայցական, բացառական, գործիական, անգոյական:

Պ. 6 ձ	Ի. Բ	Ի. Բ	Ի. Բ
Ուղ. ո՞վ: — Մեակերսը սովորում է դասը:	Ի՞նչ (Ե): Դասարանը լուսավոր է:	Ի՞նչ (Ե): Դասարանը լուսավոր է:	Աշակերտը, դասարանը:
Սեռ. ո՞ւմ: — Մեակերսի գիրքը նոր է:	Ի՞նչ (Ե): Դասարանի պատերին նկարներ կան:	Ի՞նչ (Ե): Դասարանի պատերին նկարներ կան:	Աշակերտի, դասարանի:
Տր. ո՞ւմ: — Մեակերսին մի գիրք տվեց ուսուցիչը:	Ի՞նչ (Ե): Դասարանին մտնեցավ վարիչը:	Ի՞նչ (Ե): Դասարանին մտնեցավ վարիչը:	Աշակերտին, դասարանին:
Հայց. ո՞ւմ: — Մեակերսին գովում է ուսուցիչը:	Ի՞նչ (Ե): Յեռ գովում եմ մեր Դասարանը:	Ի՞նչ (Ե): Յեռ գովում եմ մեր Դասարանը:	Աշակերտին, դասարանը:
Բաց. ո՞ւմից: — Մեակերսից ուսուցիչն ստացավ մի գիրք:	Ի՞նչ (Ե): Դասարանից դուրս յեկավ ուսուցիչը:	Ի՞նչ (Ե): Դասարանից դուրս յեկավ ուսուցիչը:	Աշակերտից, դասարանից:
Գործ. ո՞ւմով: Մեակերսով հպարտանում է ուսուցիչը:	Ի՞նչ (Ե): Դասարանով անցավ մի ընկեր:	Ի՞նչ (Ե): Դասարանով անցավ մի ընկեր:	Աշակերտով, դասարանով:
Ներգ. ո՞ւմ մեջ: — Մեակերսի մեջ կան սեր գեպի ընթերցանությունը:	Ի՞նչ (Ե): Դասարանում պարանպում են աշակերտները:	Ի՞նչ (Ե): Դասարանում պարանպում են աշակերտները:	Աշակերտի մեջ, դասարանում:

Մենք ցույց տվող գոյականները ներգոյական հոլով չունեն, և դրա փոխարեն գործ է ածվում սեռական հոլովը մեջ հետադրությամբ:

§ 24. ՈՒՂԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի ուղղական հոլովը ցույց է տալիս նախագառնյալի յեղանակ, գործող կամ լինող (լեղող) անձը. որի նախ:

Առաջինը սովորում է դասը:

Դասարանը լուսավոր է:

Բանվորն աշխատում է գործարանում:

Այս նախադասությունների մեջ դասարանը, առաջինը, բանվորն յեղանակ յեն և դրված են ուղղական հոլովով:

Ուղղական հոլովով են դրվում բաղադրյալ ստորոգյալ կազմող գոյականները. որինակ՝

Պետիկն աշակերտ է:

Այս նախադասության մեջ առաջին գոյականը, վոր կազմում է առաջին և բաղադրյալ ստորոգյալը, դրված է ուղղական հոլովով:

Ուղղական հոլովը պատասխանում է հիվ կամ ի՞նչ (ը) հարցին:

§ 25. ՍԵՌԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան, վորին պատկանում է մի ուրիշ առարկա կամ առարկաներ. որինակ՝

Առաջինը գիրքը նոր է:

Դասարանի պատերին նկարներ կան:

Պետիկի գրչածայրը կոտրվեց:

Այս նախադասությունների մեջ դասարանի բառակեր ցույց է տալիս, վոր պատերը դասարանին են, առաջինը ցույց է տալիս, վոր գիրքը աշակերտին է, Պետիկի բառակեր ցույց է տալիս, վոր գրչածայրը Պետիկին է:

Դասարանի, առաջինի, Պետիկի բառակերը դրված են սեռական հոլովով:

Սեռական հոլովով դրված բառերը լինում են յեղանակի կամ վորեւե այլ բառի լրացում:

Անապան հոլովը պատասխանում ե ո՞ւմ կամ ինչի՞ւ հարցին:

§ 26. ՏՐԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի տրական հոլովը ցույց ե տալիս այն առարկան, զորին հանգում ե յեմքականի գործողությունը այսինքն՝ ախտնը կամ իրը, վորին յենթական դիմում, մոտենում ե, կամ տալիս ե մի բան, կամ վորի ոգտին կամ վնասին կատարում ե գործողությունը. որինակ՝

Աշակերտին մի գիրք տվեց իր ուսուցիչը:

Գրատախտակին մոտեցավ ուսուցիչը:

Այս նախադասությունների մեջ առարկան ինչի՞նք և գրասխանին բառաձևերը գրված են տրական հոլովով:

Գոյականի տրական հոլովը սովորաբար լինում ե ստորոգյալի լրացում:

Տրական հոլովը պատասխանում ե ո՞ւմ կամ ինչի՞ւ (ն) հարցին:

§ 27. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի հայցական հոլովը ցույց ե տալիս այն առարկան, վորն իր վրա յե կրում յեմքականի կատարած գործողությունը. որինակ՝

Աշակերտին գտվում ե ուսուցիչը:

Յես գտվում եմ մեր դասարանը:

Պրոֆեսորիստը ջախջախեց բուրժուազիային:

Այս նախադասությունների մեջ դասարանը, վոր կրում ե իր վրա յես յենթականի գործողությունը (գտվում եմ), առարկան, վոր կրում ե իր վրա ուսուցիչը յենթականի գործողությունը (գտվում ե) և բուրժուազիային, վոր կրում ե իր վրա պրոֆեսորիստը յենթականի գործողությունը (ջախջախեց), գրված են հայցական հոլովով:

Գոյականի հայցական հոլովը լինում ե սովորաբար ստորոգյալի լրացում:

Հայցական հոլովը պատասխանում ե ո՞ւմ կամ ի՞նչ (ը) հարցին:

§ 28. ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի բացառական հոլովը ցույց ե տալիս այն առարկան, վորից սկսվում ե յեմքականի գործողությունը. որինակ՝

Առարկանից ուսուցիչը ստացավ մի գիրք:

Դասարանից դուրս յեկավ Նինիկը:

Թղթից մի կտոր պատռեցի:

Դասարանից, առարկանից և թղթից բառաձևերը բացառական հոլովով են գրված:

Գոյականի բացառական հոլովը լինում ե սովորաբար ստորոգյալի լրացում:

Բացառական հոլովը պատասխանում ե ո՞ւմից կամ ինչի՞ց հարցին:

§ 29. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի գործիական հոլովը ցույց ե տալիս այն առարկան, վորի միջոցով կամ վորով կատարվում ե յեմքականի գործողությունը. որինակ՝

Ջուլիկը գրում ե մատիտով:

Դասարանով անցավ մի ընկեր:

Առարկանով հպարտանում ե ուսուցիչը:

Մաթիսով, դասարանով և առարկանով բառաձևերը գրված են գործիական հոլովով:

Գոյականի գործիական հոլովը լինում ե սովորաբար ստորոգյալի լրացում:

Գործիական հոլովը պատասխանում ե ո՞ւմով կամ ինչով (նաև վերտեղով) հարցին:

§ 30. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՂՈՎ

Գոյականի ներգոյական հոլովը ցույց ե տալիս այն տեղը կամ այն առարկան, վորի մեջ կատարվում ե յեմքականի գործողությունը. որինակ՝

Դասարանում պարապում են լուսինն ու Աշոտը:

Դասում աշխատում ե տրակտորը:

Դասարանում և դասում բառաձևերը գրված են ներգոյական հոլովով:

Ներգոյական հոլովով գրված գոյականները լինում են անվորաբար ստորագլխի լրացում:

Ներգոյական հոլովը պատասխանում է ո՞ւմ մեջ կամ ինչո՞ւմ (նաև վո՞րսեղ) հարցին:

§ 31. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

Գոյականներն ունեն լերկու թիվ՝ յեզակի և հոգնակի:

1. Յեզակին ցույց է տալիս մի հաս առարկա, կամ մուլ-
հանման առարկաների հավաքական ամբողջություն. որինակ՝
պատ, վոտ, մատ, փողոց, քաղաք, կազմակերպություն,
ժողովուրդ, աշակերտություն, քանակ և այլն:

2. Հոգնակին ցույց է տալիս միեկմուկն տեսակի մեկից
ավելի առարկաներ. որինակ՝

պատեր, վոտներ, մատներ, փողոցներ, քաղաքներ, կազ-
մակերպություններ և այլն:

3. Հոգնակին կազմվում է յեզակի ուղղականին ավելաց-
վելով երկամ ԵՆ՝ վերջավորություն:

Միավանկ գոյականներին ավելացվում է եր, իսկ բազմա-
վանկներին՝ ԵՆ՝ վերջավորություն. որինակ՝

Միավանկ

Բազմավանկ

Յեզակի	Հոգնակի	Յեզակի	Հոգնակի
պատ	պատեր	գլուխ	գլուխներ
գիրք	գրքեր	աշակերտ	աշակերտներ
թիվ	թվեր	կոլեկտիվ	կոլեկտիվներ
տուն	տներ	գրատախտակ	գրատախտակներ

4. Յեթե բազմավանկ բառի վերջին հնչյունն է Ե, հոգնա-
կի թվում ստացվում է յերկու Ե. որինակ՝

Յեզակի	Հոգնակի
նստարան	նստարաններ
սեղան	սեղաններ
կոմյերիտական	կոմյերիտականներ

5. Մի շարք միավանկ գոյականներ հոգնակիում ստանում
են ԵՆ՝ վերջավորություն, փոխանակ եր ստանալու. այդ բառերի

արձանները դրաբարում վերջավորվել են Ե-ով, վոր աշխարհա-
բարի մեջ յեզակիում կորել է, իսկ հոգնակիում պահպանվել
որինակ՝

Գրաբար

Առխարհաբար

Յեզակի	Յեզակի	Հոգնակի
եզն (յեզն)	յեզ	յեզներ
ոտն (վոտն)	վոտ	վոտներ
մատն	մատ	մատներ
լեռն (լլառն)	լեռ	լեռներ
դուռն	դուռ	դռներ
ծուկն	ծուկ	ծկներ
մուկն	մուկ	մկներ

5. Յերը հատուկ անունները գործածվում են հոգնակի ձե-
վով, նրանց առաջին տառը գրվում է մեծատառ, ինչպես յեզա-
կիում. որինակ՝

Արամներ, Սարոներ, Չատոներ, Հակոբներ:

Քանի՜, քանի՜ ճանաչմաններ ընկան մեր պայքարում:

§ 32. ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌՈՒՄՆԵՐԸ

Գոյականները ցույց են տալիս կամ անձ կամ իր. որինակ՝
Անձ՝

Գրիգոր, Պետրիկ, Նուշիկ, Ջուլիկ, Հրաչյա, Սահակ, ու-
սուցիչ, աշակերտ, վարիչ և այլն:
Իր՝

փայտ, մատիտ, արկղ, հաց, գրիչ, թեղան, աթոռ և այլն:
Անձ ցույց տվող գոյականները մարդկանց հատուկ և հա-
սարակ անուններ են. որինակ՝

Հրաչիկ, Արփիկ, գործավար, հրամանատար, վաշտապետ,
պիոներ, նախագահ:

Գոյականների այս լերկու խմբերից յուրաքանչյուրը նա-
խադասվածն մեջ գործ էածվում վորոշյալ կամ անորոշ ա-

առումով: Վորոշյալ առումով դործածվող բառերն ստանում են ք
կամ 6 հոգը, որինակ՝

Կոլվարը մոտեցավ մի աշակերտի (ա շ ա կ եր տ ի—ա ն առ ու
առումով և գործածված):

Կոլվարը մոտեցավ մեր դպրոցի աշակերտին (ա շ ա կ եր
տ ի ն—վորոշյալ առումով և գործածված):

Հայցական հոլովով դրված անձ և իր ցույց տվող զոյա-
կանները տարբեր վերջավորութունն են ստանում.
որինակ՝

Հայց. Յես տեսա քո գիրքը (գիրքը—իւր ե):

Հայց. Յես տեսա քո աշակերտին (աշակերտին—անձ ե):

§ 33. ՀՈԼՈՎՈՒԾՆԵՐ

Բոլոր գոյականները միատեսակ չեն հոլովվում: Հոլովման
տարբերությունները յերևան են դալիս սեռական հոլովում, իսկ
մյուս հոլովներում տարբերություններ կարող են լինել կամ
չլինել.

Ուղ. սեղան, քույր, աշուն, գինի:

Սեռ. սեղանի, քրոջ, աշնան, գինու:

Հոլովվելու յուրաքանչյուր սեռակր կոչվում է հոլովում:

Սեռական հոլովի վերջավորությունները, վորոցով վորոշվում
է հոլովման սեռակր, կոչվում են հոլովիչներ:

Հայերենն ունի ութ հոլովում, ուրեմն և ութ հոլովիչ՝ ի, ու,
ան, յան, ոչ, որ, վա, ց:

§ 34. Ի ՀՈԼՈՎՈՒԾ

1. Այս հոլովման պատկանող գոյականները սեռական հո-
լովում ստանում են ի վերջավորությունը, Ի հոլովման և պատ-
կանում գոյականների մեծ մասը, ինչպես և բոլոր գոյականնե-
րի հոգնակին:

Ի վ ժ	Ի ը	Ա ն ձ		Հարցեր	Հոլով
		Անորոշ	Վորոշյալ		
Ուղ. Սեռ. Տր. Հայց. Բաց. Գործ. Ներգ.	պատ	պատ	աշակերտը	հոլ, ի՞նչ(ը)	Ուղ.
	պատի	պատի	աշակերտի	հում, ի՞նչի	Սեռ.
	պատին	պատի	աշակերտին	հում, ի՞նչի(ն)	Տր.
	պատը	պատ	աշակերտն	հում, ի՞նչ(ը)	Հայց.
	պատից	պատից	աշակերտից	հումից, ի՞նչից	Բաց.
	պատով	պատով	աշակերտով	հումով, ի՞նչով	Գործ.
Ուղ. Սեռ. Տր. Հայց. Բաց. Գործ. Ներգ.	պատում	պատում	(աշակերտի մեջ)	(հում մեջ), ի՞նչում	Ներգ.
	պատել	պատել	աշակերտները	հոլվե՞ր, ի՞նչեր	Ուղ.
	պատելի	պատելի	աշակերտների	հում, ի՞նչերի	Սեռ.
	պատելին	պատելին	աշակերտներին	հում, ի՞նչերի(ն)	Տր.
	պատելը	պատել	աշակերտներն	հում, ի՞նչեր	Հայց.
	պատելից	պատելից	աշակերտներից	հումից, ի՞նչերից	Բաց.
Ուղ. Սեռ. Տր. Հայց. Բաց. Գործ. Ներգ.	պատելով	պատելով	աշակերտներով	հումով, ի՞նչերով	Գործ.
	պատելում	պատելում	(աշակերտների մեջ)	(հում մեջ), ի՞նչերում	Ներգ.

2. Իր ցույց տվող գոյականները ուղղականն ու հայցականը ամեն դեպքում ձևով նման են (ուղ. պատ, պատք. հայց. պատ, պատք), իսկ սեռականն ու սրականն անորոշ առումով նման են (սեռ. պատի, սրակ. պատի), վորոշյալ առումով՝ տարբեր (սեռ. պատի, սրակ. պատիք):

3. Անձ ցույց տվող գոյականների ուղղականն ու հայցականը, սեռականն ու սրականն անորոշ լինելու դեպքում ձևով նման են (ուղ. առակերս, հայց. առակերս, սեռ. առակերսի, սրակ. առակերսի), իսկ վորոշյալ լինելու դեպքում մեծ մասամբ տարբեր (ուղ. առակերսք, հայց. առակերսիք, սեռ. առակերսի, սրակ. առակերսիք):

4. Անձ կամ կենդանի ցույց տվող գոյականները ներգոյականի մեջ ունենում են վերջավորությունը չեն ստանում. նրանց ներգոյականը կազմվում է սեռականով և մեջ բառով. որինակ՝

Ուսուցիչն իր առակերսի մեջ ընդունակություններ է տեսնում:

§ 35. Ու ՀՈՒՈՎՈՒՄ

1. Այս հոլովման պատկանող գոյականները սեռականում ունենում են ու հոլովիչը, գործիականում՝ սովորական ով վերջավորությունը:

Թիվ	Հոլով	Ա ն ձ		Ի ր	
		Անորոշ	Վորոշյալ	Անորոշ	Վորոշյալ
Յ ե գ ա կ ի	Ուղ.	ամուսին	ամուսինը	մատանի	մատանին
	Սեռ.	ամուսնու	ամուսնու	մատանու	մատանու
	Տր.	ամուսնու	ամուսնու	մատանու	մատանու
	Հայց.	ամուսին	ամուսնու	մատանի	մատանի
	Բաց.	(նաև՝ ամուսնու)	ամուսնու	մատանու	մատանու
	Գործ.	ամուսնու	ամուսնու	մատանու	մատանու
Ն ե գ ա կ ի	Ներգ.	(ամուսնու մեջ)	(ամուսնու մեջ)	մատանում կամ մատանիում	մատանում կամ մատանիում

Թիվ	Հոլով	Ա ն ձ		Ի ր	
		Անորոշ	Վորոշյալ	Անորոշ	Վորոշյալ
Յ ե գ ա կ ի	Ուղ.	ամուսիններ	ամուսիններ	մատանիներ	մատանիներ
	Սեռ.	ամուսինների	ամուսինների	մատանիների	մատանիների
	Տր.	ամուսինների	ամուսինների	մատանիների	մատանիների
	Հայց.	ամուսիններ(ի)	ամուսինների	մատանիներ	մատանիներ
	Բաց.	ամուսիններից	ամուսիններից	մատանիներից	մատանիներից
	Գործ.	ամուսիններով	ամուսիններով	մատանիներով	մատանիներով
Ն ե գ ա կ ի	Ներգ.	(ամուսինների մեջ)	(ամուսինների մեջ)	մատանիներում	մատանիներում

2. Ու հոլովման են պատկանում բոլոր այն գոյականները և գոյականաբար գործածվող մյուս բառերը, վորոշք յեզակի ուղղականում վերջավորվում են ի ձայնավորով (բացառությամբ քի և դի բառերի). որինակ՝ այգի (սեռ. այգու և այլն), վորդի (սեռ. վորդու և այլն), գյուղացի (սեռ. գյուղացու և այլն), ծերունի (սեռ. ծերունու և այլն):

Ձի բառը չի փոխում ի ձայնավորը, բայց ստանում է ու հոլովման բոլոր վերջավորությունները (ուղ. ձի, սեռ. ձիու, տր. ձիու, հայց. ձի, բաց. ձիաց, գործ. ձիով):

Մարդ բառը յենթաբերվում է ու հոլովման, իսկ հոգնակի թվում, շեղվելով ընդհանուր կանոնից, հոլովվում է գրաբարախառն ձևով:

Յեզակի

Ուղ. մարդ, մարդը
Սեռ. մարդու, մարդու
Տր. մարդու, մարդու
Հայց. մարդ, մարդու
Բաց. մարդուց, մարդուց
Գործ. մարդով, մարդով
Ներգ. (մարդու մեջ)

Հոգնակի

մարդիկ, մարդիկ
մարդկանց, մարդկանց
մարդկանց, մարդկանց
մարդիկ, մարդկանց
մարդկանցից, մարդկանցից
մարդկանցով, մարդկանցով
(մարդկանց մեջ)

Մարդ բառը միակ բառն է, վոր հոգնակի ուղղականում ստանում է իկ վերջավորությունը (մարդիկ):

§ 36. ԱՆ ՀՈՂՈՎՈՒՄ

1. Այս հոլովման պատկանող բառերը սեռականում ունենում են աճ վերջավորությունը. որինակ՝ ծուկ—ծկան, ուսում—ուսման, նուռ—նռան:

2) Այս հոլովման պատկանող բառերի զգալի մասը յենթարկվում են հնչյունափոխության:

Թիվ	Հոլով	Ա ն ձ		Ի ր	
		Անորոշ	Վորոշյալ	Անորոշ	Վորոշյալ
Յ Գ Ա Կ Ի	Ուղ.	Թոռ	Թոռը	դուռ	դուռը
	Սեռ.	Թոռան	Թոռան	դռան	դռան
	Տր.	Թոռան	Թոռան(ը)	դռան	դռան(ը)
	Հայց.	Թոռ	Թոռան(ը)	դուռ	դուռը
	Բաց.	Թոռնից (նակ' Թոռից)	Թոռնից	դռնից	դռնից
	Փորձ.	Թոռնով (նակ' Թոռով)	Թոռնով	դռնով	դռնով
Հ Գ Ա Կ Ի	Ներգ.	(Թոռան մեջ)	(Թոռան մեջ)	դռնում	դռնում
Հ Գ Ա Կ Ի	Ուղ.	Թոռներ	Թոռները	դռներ	դռները
	Սեռ.	Թոռների	Թոռների	դռների	դռների
	և այլն	և այլն	և այլն	և այլն	և այլն

Աճ հոլովման ե պատկանում այն գոյականների մեծ մասը, վորոնք գրաբարում ունեցել են և վերջավորությունը, իսկ ժողովրդական և գրական լեզվի մեջ կորցրել են այն. որինակ՝

Անխառնաբար

Գրաբար

ծուկ

ծուկն

մուկ

մուկն

դուռ

դուռն

գառ

գառն

յեզ

յեզն

նուռ

նուռն

և այլն:

և այլն:

Այս կարգի գոյականներն աշխարհաբար լեզվի մեջ հոգնակի թվում վերականգնում են իրենց և բաղաձայնը (ձկներ, մկներ, դռներ, գառներ, յեզներ և այլն):

Բացառություն են կազմում սեռմ, աճն, մաս և նման բառերը (սերմեր, անձեր, մասեր):

Աճ հոլովման են պատկանում նաև ում (գրաբարում ումն) վերջածանցավոր գոյականները. որինակ՝

Ձեկուցումը յերկարեց:

Ձեկուցման նյութը հետաքրքրական էր:

Նույնպես և՛ ուսում—ուսման, ընդհատում—ընդհատման, հաշվառում—հաշվառման, և այլն:

Աճ հոլովման են պատկանում նաև տուն և տուն բառերը, վորոնք սեռականում վերջավորություն չեն ստանում, այլ փոխում են արմատական ու ձայնավորը ա-ի:

§ 37. ՅԱՆ ՀՈՂՈՎՈՒՄ

1. Այս հոլովման են պատկանում բոլոր այն գոյականները, վորոնք սեռականում ունեն յան վերջավորությունը. Այս գոյականների գործիականն ունի յամբ, յերբեմն՝ ով:

Թիվ	Հոլով	Ի ր	
		Ա ն ո Ր Ո Շ	Վ ո Ր Ո Շ Յ Ա Լ
Յ Գ Ա Կ Ի	Ուղ.	հիմարկություն	հիմարկությունը
	Սեռ.	հիմարկություն	հիմարկություն
	Տր.	հիմարկություն	հիմարկություն(ը)
	Հայց.	հիմարկություն	հիմարկությունը
	Բաց.	հիմարկությունից	հիմարկությունից
	Փորձ.	հիմարկությամբ կամ հիմարկությամբ	հիմարկությամբ կամ հիմարկությամբ
Յ Գ Ա Կ Ի	Ներգ.	հիմարկությունում (հիմարկություն մեջ)	հիմարկությունում
Վ Ի Մ Ե Ր	Ուղ.	հիմարկություններ	հիմարկությունները
	Սեռ.	հիմարկությունների	հիմարկությունների
Վ Ի Մ Ե Ր	և այլն:	և այլն:	և այլն:

Ֆան հոլովման պատկանող մի շարք գոյականներ հոգնակի չունեն, ավելի ճիշտ՝ հոգնակի չեն գործածվում։ որինակ՝ բանվորություն, գյուղացիություն, և այլն, չեն գործածվում՝ բանվորություններ, գյուղացիություններ։

§ 38. Վա ՀՈԼՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող գոյականները, վորոնք ժամանակ են ցույց տալիս, սեռականում ունենում են վա վերջավորությունը, վոր ավելանում է ուղղականի վրա։ Բացառականի, յերբեմն և գործիականի վերջավորությունները դրվում են տականի վրա։ Վա հոլովման պատկանող անձ ցույց տվող գոյականներ չկան։

Թիվ	Հոլով	Անորոշ	Վորոշյալ
Յ Ե Գ Ա Կ Ի	Ուղ.	որ	որը
	Սեռ.	որվա	որվա
	Տր.	որվա	որվան
	Հայց.	որ	որը
	Բաց.	որվանից (որից)	որվանից (որից)
	Գործ.	որվանով (որով)	որվանով (որով)
	Ներգ.	որում (որվա մեջ)	որում (որվա մեջ)
Հոգնակի	Ուղ.	որեր	որերը
	Սեռ.	որերի և այլն։	որերի և այլն։

Ժամ, տարաք, ամիս, կեսուր, գիշեր, ցերեկ գոյականները յենթարկվում են վա հոլովման, բայց նրանց գործիականի ով վերջավորությունն ավելանում է վոչ թե տրականի, այլ ուղղականի վրա։

Ուղ. ժամ, շաբաթ, ամիս, կեսուր, գիշեր, ցերեկ։
Սեռ. ժամվա, շաբաթվա, ամսվա, կեսուրվա, գիշերվա, ցերեկվա։

Տր. ժամվա, շաբաթվա, ամսվա, կեսուրվա, գիշերվա, ցերեկվա։

Հայց. ժամ, շաբաթ, ամիս, կեսուր, գիշեր, ցերեկ։

Բաց. ժամվանից, շաբաթվանից, ամսվանից, կեսուրվանից, գիշերվանից, ցերեկվանից։

Գործ. ժամով, շաբաթով, ամսով, կեսուրով, գիշերով, ցերեկով։

Ներգ. ժամում, շաբաթում, ամսում, կեսուրում, գիշերում, ցերեկում։

Ժամ, տարաք, ամիս և գիշեր բառերը յենթարկվում են նաև ի հոլովման. որինակ՝

Ժողովը նշանակված է ժամի հինգին։

Մայիս ամսի 20-ին գնալու յենք երկուրսիս։

Ամիս բառը գործ է ածվում ամսույս ձևով (ամսույս 26-ին, այսինքն՝ այս ամսի 26-ին)։

§ 39. ՈՋ ՀՈԼՈՎՈՒՄ

1. Այս հոլովման պատկանող գոյականների սեռականն ունենում է ոջ վերջավորություն։ Ոջ հոլովման գոյականների մեջ իր ցույց տվող գոյականներ չկան, բոլորն ել անձ են ցույց տալիս։

Թիվ	Հոլով	Անորոշ	Վորոշյալ
Յ Ե Գ Ա Կ Ի	Ուղ.	քույր	քույրը
	Սեռ.	քուջ	քուջ
	Տր.	քուջ	քուջը
	Հայց.	քույր	քուջը
	Բաց.	քուջից	քուջից
	Գործ.	քուջով	քուջով
	Ներգ.	(քուջ մեջ)	(քուջ մեջ)
Հոգնակի	Ուղ.	քույրեր	քույրերը
	Սեռ.	քույրերի և այլն։	քույրերի և այլն։

2. Ոչ հոլովման են պատկանում կիճ, սիկիճ, բուլը, սկե սուր, աճեր, սալ, ընկեր և սեր գոյականներն ու դրանցով բարդված բառերը (մորաբուլը, մորաբոջ): Քուլը բառի մեջ ուլ յերկհնչյունը յենթարկվում է հնչյունափոխության (քուլը, քրոջ):

3. Աճեր, սալ, սկեսուր և ընկեր գոյականները գործածվում են նաև ի հոլովմամբ (աների, տալի, սկեսուրի, ընկերի):

Կիճ բառի հոգնակին մեր գրական լեզվի որենքներին համապատասխան չե և կազմվում է գրաբարախառն հոլովաձևերով: Հոգնակի

Անորոշ	Վորոշյալ
Ուղ. կանայք	կանայք
Սեռ. կանանց	կանանց
Տր. կանանց	կանանց
Հայց. կանայք	կանանց
Բաց. կանանցից	կանանցից
Գործ. կանանցով	կանանցով
Ներգ. կանանց մեջ	կանանց մեջ

Կիճ և մարդ բառերի հոգնակի ձևերը հոգ չեն ստանում:

§ 40. ՈՐ ՀՈԼՈՎՈՒՄ

1. Այս հոլովման պատկանող գոյականներն ունեն այր վերջնականի, վորը սեռականում դառնում է որ: Այս հոլովման յենթարկվող գոյականների մեջ իր նշանակող բառեր չկան, ըստինքն ել անձ են ցույց տալիս:

Թիվ	Հոլով	Անորոշ	Վորոշյալ
Բ Ե Պ Ե Ն	Ուղ.	հայր	հայրը
	Սեռ.	հոր	հոր
	Տր.	հոր	հորը
	Հայց.	հայր	հորը
	Բաց.	հորից	հորից
	Գործ.	հորով	հորով
	Ներգ.	(հոր մեջ)	(հոր մեջ)

Թիվ	Հոլով	Անորոշ	Վորոշյալ
Հոգնակի	Ուղ.	հայրեր	հայրերը
	Սեռ.	հայրերի և այլն:	հայրերի և այլն:

2. Որ հոլովման պատկանող բառերն են հայր, մայր, յեղբայր գոյականները և դրանցով բարդված բառերը (հորեղբայր, նախահայր, նախամայր և այլն):

§ 41. Ֆ ՀՈԼՈՎՈՒՄ

1. Այս հոլովման են պատկանում այն գոյականները, վորոնք ուղղակաճում ունենում են և, սեռականում ց վերջավորությունը և հավաքական իմաստ ունեն:

Այս գոյականների մեջ իր ցույց տվող բառեր չկան, բոլորը նշանակում են անձ:

Թիվ	Հոլով	Վորոշյալ
	Ուղ.	Գրիգորենք
	Սեռ.	Գրիգորենց
	Տր.	Գրիգորենց
	Հայց.	Գրիգորենց
	Բաց.	Գրիգորենցից
	Գործ.	Գրիգորենցով
	Ներգ.	(Գրիգորենց մեջ)

2. Ֆ հոլովման գոյականները յեղակի չունեն և կոչվում են անեղական:

3. Ֆ հոլովման գոյականները վերջավորվում են մեծ մասամբ աճ, ոճ, եճ ածանցներով. որինակ՝ պապոճ, Սուրբենճ, Գուրգենաճ և այլն:

§ 42. ՀԱՐԱԴԻՐ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄ

1. Հարադիր գոյականների հոլովման ժամանակ փոփոխվում են միայն յերկրորդ բառը. որինակ՝

Ուլ. նիստ ու կաց(ը)

Սեռ. նիստ ու կացի

Տր. նիստ ու կացի(ն)

Հայց. նիստ ու կաց(ը)

Բաց. նիստ ու կացից

Գործ. նիստ ու կացով

Ներգ. նիստ ու կացում

2. Մի քանի դեպքերում հարադիրներից առաջինը հոլովվում են մինչև հայցականը. որինակ՝ մայր ու աղջիկ, մոր ու աղջկա, մորն ու աղջկան. բայց՝ մոր ու աղջկանից (առաջին բառը սեռական ձևով) և այլն:

§ 43. ԳՐԱԲԱՐ ՀՈՂՈՎԱԶԵՎԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

Դրաբուրջան հոլովաձևերից մի շարք մնացորդներ կան մեր լեզվի մեջ, վոր այժմ չեն ըմբռնվում վորպես հոլովաձև. որինակ՝

հրապարակավ, իհարկե, անծամբ, հայոց լեզու և այլն:

1. Ք ածանցը, վոր գրաբարում հոգնակի վերջավորութունն է, աշխարհաբարում դրվում են ի ձայնավորով վերջավորվող բառերի վրա և գործածվում վորպես հոգնակի կազմող երկրորդական ձև, վոր շատ տարածված է. որինակ՝ անգլիացիք, յերևանցիք և այլն:

Այդպիսի բառերը գործ են ածվում ավելի քան վերջավորությամբ (անգլիացիքներ, յերևանցիքներ):

§ 44. ԳՈՅԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

Ա.կ.—ազդակ, գիտակ, դիտակ, և այլն:

Ա.գ.—վիպասան, հարտասան, խթան, ծորան, կռան, գլան, փական, խոտան և այլն:

Ա.գ.բ.—գովասանք, վիրավորանք, զրկանք, գգվանք, քամքասանք, նախերգանք, աշխատանք, պատրանք, տականք, տանջանք, ծփանք, հալածանք և այլն:

Ե. (նաև ածականի ածանց).—յերգիչ, նկարիչ, բնակիչ, վարիչ, ուսուցիչ և այլն:

Մ.ու.գ.բ.—ուսմունք, արարմունք, ցուցմունք, բաժանմունք, հուզմունք, պարապմունք և այլն:

Տ.ու.գ.—հնչյուն, գոչյուն, ղողանջյուն, խոխոջյուն, մռնչյուն, դղրդյուն, դոփյուն և այլն:

Ուղ.—առաջնորդ, գնորդ, պակասորդ, սավառնորդ, հետեւորդ, ճանապարհորդ, փոխանորդ, անցորդ և այլն:

Ությու.գ.—ընկերություն, հնություն, նշանակություն, շինարարություն, ընթերցանություն, հարմարություն, կառավարություն, իշխանություն, միություն և այլն:

Ունի (իզական սեռի անձ ցույց աւել ածանց).—բանվորունի, բանաստեղծունի, դերասանունի, աշակերտունի, ուսուցչունի, հայտունի, հրեյունի, գեղեցկունի և այլն:

Ա.վոր, վոր.—պատգամավոր, աշխատավոր, բանվոր, բոցվոր և այլն:

Ում (գործողության անուն նշանակությամբ).—կառուցում, զարգացում, մերծեցում, հուզում շարժում, ուսում և այլն:

Ոց.—դարբնոց, դպրոց, հյուսնոց և այլն:

Ույթ.—բնույթ, ծանծրույթ, հումույթ, սովորույթ, հավարույթ և այլն:

Ուգ.—մանրունք, համեմունք, իրավունք, սկզբունք և այլն:

Վածբ, ված.—պատմվածք, ճեղքվածք, բացվածք, հարված, հողված և այլն:

Ս.ա.գ.—ծուլարան, նստարան, ննջարան, կացարան, դասարան, թեյարան, հաշարան և այլն:

Ք (գրաբարի հոգնակի վերջավորութուն, վոր աշխարհաբարի մեջ գիտակցվում են իբրև գոյական կազմող ածանց՝ յեզակի թվով).—միտք, բերք, հումք, խելք, կյանք, որենք և այլն:

§ 45. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ածական է կոչվում այն բառը, վոր ցույց է տալիս առարկայի հատկությունը կամ վերաբերությունը, այսինքն առարկայի ինչպիսի կամ ինչից լինելը, ում կամ ինչին վերաբերելը, որինակ՝

ա) լավ, մեծ, փոքր, կարմիր, ջանասեր, յեռանդուն և այլն:

Այս ածականները ցույց են տալիս առարկայի հատկությունը:

բ) Փայտյա, յերկաթյա, հրեղեն, վոսկեղեն և այլն:

Այս ածականները ցույց են տալիս առարկայի ինչից լինելը. որինակ՝

Փայտյա դուռ—կապակցության մեջ փայտյա ածականը ցույց է տալիս, վոր դուռը փայտից է:

Յերկաթյա դուռ—կապակցության մեջ յերկաթյա ածականը ցույց է տալիս, վոր դուռը յերկաթից է:

գ) Լեռնային, ցամաքային, ժողովրդական, գյուղացիական և այլն:

Այս ածականները ցույց են տալիս, թե ինչին կամ ում է վերաբերում առարկան. որինակ՝ Լեռնային կլիմա կապակցության մեջ լեռնային ածականը ցույց է տալիս, վոր կլիման հատուկ է, վերաբերում է լեռներին:

Ածականները պատասխանում են ի՞նչպիսի, վա՞րպիսի, վո՞ր հարցերին:

Ածականները լինում են յերկու տեսակ՝ վորակական և հարաբերական:

§ 46. ՎՈՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Վորակական կոչվում են այն ածականները, վորոնք ցույց են տալիս առարկայի համեմատելի հատկությունը, ինչպիսի լինելը.

որինակ՝ զեղեցիկ, լայն, բարձր:

Վորակական ածականներն ունեն համեմատության աստիճաններ: Համեմատության աստիճանները բացահայտում են ածականի ցույց տված հատկության չափը. որինակ՝

լավ, ավելի լավ, լավագույն կամ ամենալավ. զեղեցիկ, ավելի զեղեցիկ, ամենազեղեցիկ, զեղեցկագույն և այլն:

1. Յերբ ածականը ցույց է տալիս առարկայի հատկություն՝ առանց համեմատելու մի այլ առարկայի հետ, լինում է գրական աստիճանի. որինակ՝

լավ, հաստ, բարակ, հաջող, անհաջող, ուրախ, խելոք, շնորհալի և այլն:

2. Յերբ ածականը ցույց է տալիս առարկայի հատկությունը՝ համեմատելով մեկ ուրիշ առարկայի հետ, ստանում է համեմատական աստիճան: Համեմատական աստիճանը կազմվում է գրականից, վորին ավելացվում է ավելի բառը. որինակ՝

ավելի լավ, ավելի վատ և այլն:

3. Յերբ ածականը ցույց է տալիս առարկայի այնպիսի հատկությունը, վոր այլ առարկաների նույն հատկությունից գերազանց է, ստանում է գերազանցական աստիճան: Գերազանցական աստիճանը կազմվում է յերկու կերպ:

ա) Դրական աստիճանի վրա ավելացվում է ամեն բառը ա հոգակապով. որինակ՝ մեծ—ամենամեծ, լավ—ամենալավ, պետքական—ամենապետքական, զեղեցիկ—ամենազեղեցիկ, վատ—ամենավատ և այլն:

բ) Դրական աստիճանի վրա ավելացվում է ազույն վերջածանցը. որինակ՝

լավ—լավագույն, զեղեցիկ—զեղեցկագույն, հզոր—հզորագույն, մեծ—մեծագույն, բարձր—բարձրագույն, փոքր—փոքրագույն, վատ—վատագույն և այլն:

§ 47. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Հարաբերական կոչվում են այն ածականները, վորոնք ցույց են տալիս առարկայի ինչից լինելը, ում կամ ինչին վերաբերելը, այսինքն՝ վո՞չ համեմատելի հատկություն. որինակ՝

Բարե տուն, յերկաքյա դուռ, առակերտական թերթ, պիո-
նեռական տուն:

Այս կապակցութեանները մեջ Բարե ածականը ցույց է
տալիս, վոր տունը քարից է, յերկաքյա ածականը ցույց է տա-
լիս, վոր դուռը յերկաթից է, առակերտական ածականը ցույց է
տալիս, վոր թերթը վերաբերում է աշակերտին, պիոնեռական
ածականը ցույց է տալիս, վոր տունը վերաբերում, պատկա-
նում է պիոններնորին:

Հարաբերական ածականները համեմատութեան աստիճան-
ներ չունեն:

§ 48. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

Ածականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլով-
վում, մնում են անփոփոխ. որինակ՝

Ֆեզակի	Հոգնակի
Ուղ. մեծ տետրակ	մեծ տետրակներ
Սեռ. մեծ տետրակի	մեծ տետրակների
Տր. մեծ տետրակի	մեծ տետրակների
Հայց. մեծ տետրակ	մեծ տետրակներ
Բաց. մեծ տետրակից	մեծ տետրակներից
Գործ. մեծ տետրակով	մեծ տետրակներով
Ներգ. մեծ տետրակում	մեծ տետրակներում

§ 49. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ածականները գոյականաբար գործածվելիս հոլովվում են
(մեծ մասամբ վորոշյալ առումով), պատկանելով ի հոլովման.
որինակ՝

Ֆեզակի	Հոգնակի
Ուղ. լավը	լավերը
Սեռ. լավի	լավերի
Տր. լավից	լավերից
Հայց. լավը	լավերը կամ լավերից
Բաց. լավից	և այլն:
Գործ. լավով	
Ներգ. լավում	

§ 50. ԱԾԱԿԱՆԻ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆԻ ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ

1. Խոսքի մեջ ածականները կարող են գործածվել գոյա-
կանաբար, ինչպես և գոյականներն՝ ածականաբար. որինակ՝
Կապիտալիստական յերկիրներում չեմպոն մարդիկ շահա-
գործվում են:

Կապիտալիստական յերկիրներում չեմպոնները շահագործ-
վում են:

Առաջին նախադասութեան մեջ չեմպոն ածականը գործած-
ված է վորպես ածական (հատկութեան ցույց տվող), իսկ յերկ-
րորդ նախադասութեան մեջ չեմպոն ածականը գործածված է
վորպես գոյական (առարկա ցույց տվող):

Նույնն է նաև՝

Մութը պատեց դաշտ ու ձոր:

Մութ գիշերն անա պատել է չորս դին:

Առաջին նախադասութեան մեջ մութ գոյականը գործած-
ված է գոյականաբար, իսկ յերկրորդ նախադասութեան մեջ
նույն մութ գոյականը գործածված է ածականաբար:

Վորոշ թվով ածականներ յերկար ժամանակ գործածվելով
վորպես գոյական՝ վերածվել են գոյականի. որինակ՝

ազգական, անասուն, պաշտոնյա և այլն:

Այսպիսի բառերը պետք է ընդունել գոյական:

Վորոշ թվով ածականներ հավասարաչափ կերպով ճանաչ-
վում են թե վորպես գոյական և թե վորպես ածական. որինակ՝

Յուրս որ. ցուրտը փչեց:

Կենդանի եյակ:

Կենդանից րույսից ավելի բարձր որդանիզմ է:

Հարվածային աշակերտը կատարեց իր խոստումը:

Հարվածայինը կատարում է իր խոստումը:

Յուրս, կենդանի, հարվածային բառերը հավասարաչափ
կերպով ճանաչվում են թե վորպես գոյական, և թե վորպես
ածական:

Այսպիսի բառերի խոսքի վոր մասին պատկանելը վորոշե-
լու համար պետք է առաջնորդվել տվյալ գործածութեան իմաս-
տով:

Յեթն ածականները գործ են ածվում վորպես հատուկ ա-
նուն, նրանք համարվում են գոյական. որինակ՝

Պարթեւ, Անուշ, Պայծառ, Քնքուշ, Սիրուն, Լենինական, Կիրովական և այլն:

Վորոշ Թվով գոյականներ յերկար ժամանակ ածականաբար գործածվելով՝ ճանաչվում են նաև վորպես ածական. որինակ՝

մուր (մութ գիշեր), խավար (խավար գիշեր), ծակ, հրեք, և այլն:

Այսպիսի բառերի խոսքի վրա մասին պատկանելը վորոշեալ համար պետք է առաջնորդել գործածութեան իմաստով:

§ 51. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Նախադասութեան մեջ ածականները սովորաբար գործ են անում վորպես լրացում՝ թե յենթակայի և թե ստորոգյալի որինակ՝

Լավ պիտները նայել լավ սովորում ե:

Այս նախադասութեան մեջ լավ ածականը գործ է անում թե վորպես յենթակայի (պիտները) լրացում է թե վորպես ստորոգյալի (սովորում ե) լրացում:

Ածականը կարող է գործածվել վորպես ստորոգյալ կազմող բառ. որինակ՝

Արեւը պայծառ ե:

ԿՍՀՄ-ն հզոր ե:

Ածականը կարող է գործածվել նաև վորպես յենթակա կամ լրացում. որինակ՝

Կարմիրը կապույտից ավելի հաճելի գույն ե:

Այս նախադասութեան մեջ կարմիր ածականը գործ է անում վորպես յենթակա, իսկ կապույտ ածականն իբրև լրացում:

§ 52. ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

Ական.—կոմունիստական, մարքսիստական, նախագահական, յերիտասարդական, նկարչական, ժողովրդական, բանվորական, գյուղացիական, հայկական, ռուսական, հունական, խմբական, արմատական և այլն:

Այլ.—լեռնային, ցամաքային, հարվածային, բանական, և այլն:

Ա.—գտնատ, պոչատ, կիսատ և այլն:

Եղեմ (ցույց և տալիս նշանակող, վորից շինված է առարկան).—հրեղեն, վոսկեղեն, լուսեղեն, նյութեղեն և այլն:

Ե (նույնը).—փայտե, քարե, մազե, յերկաթե և այլն:

Յա (շատ բառերում է).—սեւաչաւ, փայտյա, հնգամյա, միամյա, վոսկյա և այլն:

Ի.—կազմի, ընկուզի, ծիրանի, աղի, ծրի, վայրի, սիրելի, ընդունելի և այլն:

Ին.—վերջին, հետին, վերին, հանճարին և այլն:

Ոս.—մտտ, վոսկրոտ, փշոտ, յուղոտ և այլն:

Ուն.—զգայուն, մնայուն, հնչուն, դողդոջուն, փայլուն և այլն:

Սովոր.—փառավոր, հեռավոր, գրավոր, բանավոր և այլն:

§ 53. ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

Ան (դրվելով գոյականների վրա՝ կազմում է ժխտական ստացական նշանակութեամբ ածականներ).—անտուն, անգույն, աներկյուղ, անանուն, անգութ, անհող և այլն:

Ան (դրվելով բայաբառների վրա, կազմում է ածական).—անզգա, անշարժ և այլն:

Ան (դրվելով ածականների վրա՝ բացասում, ժխտում է նրանց նշանակութունը).—անհավատար, անհաստատ, անարդար, անբնական, անազնիվ և այլն:

Ան նախածանցը ամեն մի ածականի վրա դրվել է կարող:

Ապ կամ ապա (դրվելով գոյականների և այլ բառերի վրա՝ կազմում է բացասական իմաստով ածական).—ապաշնորհ, ապաբախտ, ապուշ, ապորինի, ապերջանիկ և այլն:

Տ (նույն իմաստով).—տգեղ, տհաճ, տգետ, տծեմ, տմարդի և այլն:

Դժ (նույն իմաստով).—դժգույն, դժգոհ, դժբախտ և այլն:

Չ (նույն իմաստով).—չխոսկան, չտես, չհաս և այլն:

Ածականների հետ դրվում է մեծ մասամբ վոյ ժխտականը (և վոյ թե՛ չ նախածանցը).—որինակ՝ վոյ հեռու, վոյ ազատ, վոյ լավ և այլն:

Այս կարգի բառերը կարող են դրվել գծիկով կամ առանց գծիկի, շեշտով կամ առանց շեշտի. որինակ՝ վոյ—հեռու, վոյ հեռու, վոյ—հեռու:

ԹՎԱԿԱՆ

Թվական է կոչվում այն բառը, վոր ցույց է տալիս առարկայի թիվը կամ կարգը. որինակ՝ հինգ, ութսուն, հինգերորդ, տասներորդ, վաթսուներորդ և այլն:

Թվականները լինում են յերկու տեսակ՝ բանական և դասական:

§ 54. ԲԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

Բանական են կոչվում այն թվականները, վորոնք ցույց են տալիս առարկաների թիվը, բանակը. որինակ՝

Մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, վեց, յոթ (կամ յոթը), ութ (կամ ութը), ինը (կամ ինն), տասը, տասնմեկ, տասներկու, տասներեք, տասնչորս, տասնհինգ, տասնվեց, տասնյոթ, տասնութ, տասնինը կամ տասնինն, քսան, քսանմեկ, քսաներկու, քսաներեք, քսանչորս, յերեսուն, յերեսունմեկ, յերեսուներկու, յերեսուներեք, յերեսունչորս... քառասուն, հիսուն, վաթսուն, յոթանասուն, ութսուն, իննսուն, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ:

§ 55. ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1. Դասական են կոչվում այն թվականները, վորոնք ցույց են տալիս առարկայի կարգն ըստ հաջորդականության. որինակ՝

Առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնմեկերորդ, տասներկույերորդ, տասներեքերորդ, տասնչորսերորդ, տասնհինգերորդ, տասնվեցերորդ, տասնյոթերորդ, տասնութերորդ, տասնիններորդ, քսաներորդ և այլն:

2. Դասական թվականների ածանցն է երորդ, իսկ յերկու, յեռեք և չորս բառերի համար՝ բորդ. որինակ՝ հինգերորդ, վեցերորդ, բայց յերկուորդ, յերեքորդ, չորսորդ:

3. Դասական թվականները գրվում են.

ա) Հոռմեյական թվանշաններով. I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII, XIII... XIX, XX, XXX, XL, L, C և այլն:

բ) Հայերենի հին ալբուրեհական կարգով. ա), բ), գ), զ), հ), զ), է), ը), թ), ժ), ժա), ժբ) և այլն:

գ) Արաբական թվանշաններով. այդ դեպքում թվանշանից հետո գրվում է միացման գիծ (—) և ինքն յերկբադաձայնը. որինակ՝ 2-րդ, 3-րդ (յերրորդ), 4-րդ (չորրորդ), 5-րդ (հինգերորդ) և այլն, իսկ՝ 1-ին (առաջին):

§ 56. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂՈՎՈՒՄԸ

1. Թվականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլովվում. որինակ՝

Ֆեզակի

Ուղ. յերեք մարդ

Սեռ. յերեք մարդու

Տր. յերեք մարդու (ն)

Հայց. յերեք մարդ

Բաց. յերեք մարդուց

Գործ. յերեք մարդով

Ներգ. յերեք մարդու մեջ

Ֆեզակի

հինգերորդ մարդ

հինգերորդ մարդու

հինգերորդ մարդու (ն)

և այլն:

2. Առանձին՝ գոյականաբար գործածվելիս թվականները հոլովվում են ի հոլովմամբ:

Ֆեզակի

Ուղ. քսանը

Սեռ. քսանի

Տր. քսանին

Հայց. քսանը

Բաց. քսանից

Գործ. քսանով

Ներգ. քսանում

Ֆեզակի

քսաներորդը

քսաներորդի

քսաներորդին

և այլն

3. Յեղի թվականը հոլովվում է հետևյալ կերպ՝

Ֆեզակի

Ուղ. յերկուսը

Սեռ. յերկսի, յերկուսի

Տր. յերկսին, յերկուսին

Հայց. յերկուսը, յերկսին, յերկուսին

Բաց. յերկսից, յերկուսից

Գործ. յերկսով, յերկուսով

Ներգ. յերկսում, յերկուսում:

§ 57. ԳՈՅԱԿԱՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՈՒՆԸ ԹՎԱԿԱՆԻ ՀԵՏ

Մեկից բարձր թվականների հետ գոյականը դրվում է և՛ յեզակի և՛ հոգնակի:

1. Թվականի հետ գոյականը յեզակի թվով է դրվում.

ա) Յերբ գոյականն իր թվական լրացումով առնված է իբրև նախադասութան մի անդամ և պատասխանում է վերջան, վերջափ, վերջան տեղ, վերջան ժամանակ, քանիսի, վերջանի, վերջանով և այլն հարցերին, վորոնք ցույց են տալիս չափ ու քանակ, գին ու արժեք և ժամանակ. որինակ՝ հազար մետր, հարյուր ուրբի, քսան մարդ, հազար զինվոր, հիսուն ուսանող, տասը ժամ և այլն.

բ) Յերբ առանձնապես ուշադրության է առնվում թվական լրացման գաղափարը. որինակ՝ հազար մարդ եմ տեսել. հարյուր ընկեր կգտնեմ:

2. Թվական անվան հետ գոյականը հոգնակի թվով է դրվում:

ա) Յերբ գոյական անունը վորոշ առումով է և կամ առանձնապես ուշադրության է առնվում գոյականի հոգնակի լինելու գաղափարը. որինակ՝ ընկան նրանք, այն բաճակեց կոմունիստները:

Նրանք հինգ ընկերներ եյին. Հաբյուր միլիոն չի գյուղացիներ ըմբոստացել են գիշատիչ իմպերիալիզմի դեմ:

բ) Յերբ գոյականն անորոշ է, բայց գոյականի և թվականի միջև ընկած է մեկ ուրիշ լրացում. որինակ՝ Տառն աշխատասեր պիոներներ առաջին շարքերումն են: Քսան առաջագեմ աշակերտներ պարգևատրվեցին:

§ 58. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Նախադասության մեջ քվականները սովորաբար գործ են ածվում վորպես լրացում. որինակ,

Յերկու ընկերներ իրիկնապահին

Հրացան առած անտառ գնացին:

Հինգերորդ դասարանը հարվածային է:

Այս նախադասությունների մեջ յերկու և հինգերորդ թվականները լրացումներ են:

Թվականները կարող են լինել ստորոգյալի մաս. որինակ՝

Մի ձեռքի մատների թիվը հինգ է:

Հինգերորդ դասարանի աշակերտների թիվը յերեսունվեց է:

Այս նախադասությունների մեջ հինգ և յերեսունվեց թվականները կազմում են հինգ և յերեսունվեց ե բաղադրյալ առարկայները:

Թվականները գործ են ածվում վորպես յենթակա. որինակ՝ Հինգը յերեքից մեծ թիվ է:

Այս նախադասության մեջ հինգ թվականը գործ է ածվում վորպես յենթակա:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 59. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Դերանունն են կոչվում այն բառերը, վորոնք գործածվում են գոյականի, ածականի, բովականի յեվ մակբայի փոխարեն. որինսկ՝

1. Պիոնեքը պարապում ե: Նա դաս ե սովորում:

Այս յերկրորդ նախադասության մեջ նա բառը փոխարինում ե պիոնեք գոյականին:

2. Մայիսի 1-ին փողոցով անցնում եր մեծ բազմություն: Այսպիսի բազմություն առաջին անգամն եյի տեսնում:

Վերջին նախադասության մեջ այսպիսի բառը փոխարինում ե մեծ ածականին:

3. Աշակերտն ստացավ վեց մատիտ: Այսֆան մատիտ նա դեռ չեր ունեցել:

Վերջին նախադասության մեջ այսֆան բառը փոխարինում ե վեց բովականին:

4. Աշտոր դասը բերանացի պատասխանեց: Նա չերբեք այսպես չեր պատասխանել:

Այսպես բառը փոխարինում ե բերանացի մակբային:

Այս չորս խոսքերից յուրաքանչյուրը բաղկացած ե յերկու նախադասություններից: Յերկրորդ նախադասությունների մեջ նա, այսպիսի, այսֆան, այսպես բառերը փոխարինում են առաջին նախադասություններից հայտնի տվյալ գոյականին, ածականին, բովականին կամ մակբային: Մեկ ուրիշ նախադասության մեջ նրանք կփոխարինեն մեկ ուրիշ գոյականի, ածականի, բովականի ե մակբայի:

Այսպիսով դերանունները մյուս խոսքի մասերի նման չեն, չունեն կայուն իմաստ ե միայն յուրաքանչյուր գործածության դեպքում կարելի յե վորոշել նրանց իմաստը՝ նայելով թե խոսքի մեջ վոր բառին են փոխարինում:

§ 60. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դերանուններն իրենց նշանակությամբ ստորաբաժանվում են հետևյալ տեսակների.

Անձնական, ցուցական, սեռական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, վորոշյալ յեվ ժխական:

§ 61. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1. Անձնական գերանունն են կոչվում այն բառերը, վորոնք խոսքի մեջ գրվում են անձերի անվան փոխարեն:

Անձնական դերանուններն են. յես, ինքս, դու, ինքզ, նա, ինքը:

1. Յես, ինքս կոչվում են առաջին դեմքի անձնական դերանուն, քանի վոր խոսողը դնում ե իր անվան փոխարեն. որինսկ՝

— Յես վորոշել եմ հարվածային լինել, — ասում ե Պետիկը: Յես բառը Պետիկը գործ ե ածում իր անվան փոխարեն:

2. Դու, ինքզ բառերը կոչվում են յերկրորդ դեմքի անձնական դերանուն, քանի վոր խոսողը գործ ե ածում խոսակցի, այլինքն այն անձի անվան տեղ, վորին դիմում ե ինքը խոսողը. որինսկ՝

— Դու մեզ մի՛ խանգարիր, — ասում ե Պետիկը Կիմիկին:

Այս նախադասության մեջ դու բառը գործ ե ածվում Կիմիկի անվան փոխարեն, քանի վոր նրան ե դիմում Պետիկը:

3. Նա, ինքը բառերը կոչվում են յերրորդ դեմքի անձնական դերանուն, քանի վոր գործ են ածվում վոչ խոսողի ե վոչ ել խոսակցի, այլ մի յերրորդ անձի անվան փոխարեն, վորի մասին խոսում են. որինսկ՝

Ուսուցիչը խոսում ե: Նա պատմում ե Լենինի մասին:

Այս խոսքի մեջ նա դերանունը գործ ե ածվում ուսուցիչը գոյականի փոխարեն:

Անձնականն առանձնապես շեշտելու համար հաճախ գործ են ածվում յես ինքս, դու ինքզ, նա ինքը:

Անձնական դերանունները ինքնին միշտ վորոշյալ են, թեև վորոշող հոգ չեն ստանում. այդ պատճառով ել նրանց հայցականը միշտ նման ե տրականին:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 59. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Դերանունն են կոչվում այն բառերը, վորոնք գործածվում են գոյականի, ածականի, քվականի յեվ մակբայի փոխարեն. որինակ՝

1. Պիոնները պարապում ե: Նա դաս ե սովորում:

Այս յերկրորդ նախադասության մեջ նա բառը փոխարինում ե պիոներ գոյականին:

2. Մայիսի 1-ին փողոցով անցնում եր մեծ բազմություն: Այսպիսի բազմություն առաջին անգամն եյի տեսնում:

Վերջին նախադասության մեջ այսպիսի բառը փոխարինում ե մեծ ածականին:

3. Աշակերտն ստացավ վեց մատիտ: Այսֆան մատիտ նա դեռ չեր ունեցել:

Վերջին նախադասության մեջ այսֆան բառը փոխարինում ե վեց թվականին:

4. Աշտոր դասը բերանացի պատասխանեց: Նա չերբեր այսպես չեր պատասխանել:

Այսպես բառը փոխարինում ե բերանացի մակբային:

Այս չորս խոսքերից յուրաքանչյուրը բաղկացած ե յերկու նախադասություններից: Յերկրորդ նախադասությունների մեջ նա, այսպիսի, այսֆան, այսպես բառերը փոխարինում են առաջին նախադասություններից հայտնի տվյալ գոյականին, ածականին, քվականին կամ մակբային: Մեկ ուրիշ նախադասության մեջ նրանք կփոխարինեն մեկ ուրիշ գոյականի, ածականի, թվականի ե մակբայի:

Այսպիսով դերանունները մյուս խոսքի մասերի նման չեն, չունեն կայուն իմաստ ե միայն յուրաքանչյուր գործածության դեպքում կարելի յե վորոշել նրանց իմաստը՝ նայելով թե խոսքի մեջ վոր բառին են փոխարինում:

§ 60. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դերանուններն իրենց նշանակությամբ ստորաբաժանվում են հետևյալ տեսակների.

Անձնական, ցուցական, սեպական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, վորոշյալ յեվ ժխտական:

§ 61. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1. Անձնական գերանունն են կոչվում այն բառերը, վորոնք խոսքի մեջ գրվում են անձերի անվան փոխարեն:

Անձնական գերանուններն են. յես, ինքս, դու, ինքզ, նա, ինքը:

1. Յես, ինքս կոչվում են առաջին դեմքի անձնական գերանուն, քանի վոր խոսողը գնում ե իր անվան փոխարեն. որինակ՝

—Յես վորոշել եմ հարվածային լինել,—ասում ե Պետիկը:

Յես բառը Պետիկը գործ ե անում իր անվան փոխարեն:

2. Դու, ինքզ բառերը կոչվում են յերկրորդ դեմքի անձնական գերանուն, քանի վոր խոսողը գործ ե անում խոսակցի, այսինքն այն անձի անվան տեղ, վորին դիմում ե ինքը խոսողը. որինակ՝

—Դու մեզ մի՛ խանգարիր,—ասում ե Պետիկը Կիմիկին:

Այս նախադասության մեջ դու բառը գործ ե անում Կիմիկի անվան փոխարեն, քանի վոր նրան ե դիմում Պետիկը:

3. Նա, ինքը բառերը կոչվում են յերրորդ դեմքի անձնական գերանուն, քանի վոր գործ են անում վոչ խոսողի ե վոչ ել խոսակցի, այլ մի յերրորդ անձի անվան փոխարեն, վորի մասին խոսում են. որինակ՝

Ուսուցիչը խոսում ե: Նա պատմում ե Լենինի մասին:

Այս խոսքի մեջ նա գերանունը գործ ե անում ուսուցիչը գոյականի փոխարեն:

Անձնականն առանձնապես շեշտելու համար հաճախ գործ են անում յես ինքս, դու ինքզ, նա ինքը:

Անձնական գերանունները ինքնին միշտ վորոշյալ են, թեև վորոշող հոգ չեն ստանում. այդ պատճառով ել նրանց հայցականը միշտ նման ե տրականին:

ԱճճՆԱԿԱՆ ՂԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄ

Թիվ	Հոլով			
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Ուղ.	Յեւ, ինքս	դու, ինքդ	նա, ինքը
	Սեռ.	իմ	քո	նրա, իր, յուր
	Տր.	ինձ	քեզ	նրան, իրեն
	Հայց.	ինձ	քեզ	նրան, իրեն
	Քաղ.	ինձնից, ինձանից	քեզնից, քեզանից	նրանից, իրենից
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Քաղ.	ինձնով, ինձանով	քեզնով, քեզանով	նրանով, իրենով
	Փորձ.	ինձնում, ինձա-	քեզնում, քե-	նրանում, իրեն-
	Ներգ.	նում	զանում	նում
	Ուղ.	մենք, ինքներս	դուք, ինքներդ	նրանք, իրենք
	Սեռ.	մեր	ձեր	նրանց, իրենց
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Տր.	մեզ	ձեզ	նրանց, իրենց
	Հայց.	մեզ	ձեզ	նրանց, իրենց
	Քաղ.	մեզնից, մեզանից	ձեզնից, ձեզանից	նրանցից, իրենցից
	Քաղ.	մեզնով, մեզանով	ձեզնով, ձեզանով	նրանցով, իրենցով
	Փորձ.	մեզնում, մեզա-	ձեզնում, ձեզա-	նրանցում, իրեն-
	Ներգ.	նում	նում	ցում

Անձնական ղերանունները նախադասության մեջ գործ են ածվում վորպես յենթակա (որինակ՝ եւ գնաց), վորպես ստորոգյալ կազմող բառ (որինակ՝ Գաբիլը եւ յի) և վորպես լրացում (որինակ՝ յեւ տեսա երան)։

Անձնական ղերանունների սեռական հոլովը վրմանք կոչում են ստացական ղերանուն։

§ 62. ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

2. Ստացական ղերանուններ են կոչվում այն բառերը, վորոնք գրվում են այն առարկայի անվան տեղ, վորին պատկանում է մեկ ուրիշ առարկա. որինակ՝

Յեւ իմ տետրն եմ վերցրել, Բոնին ձեռք չեմ տվել։

Ստացական ղերանուններն են՝ իմ, եո, իր, մեր, ձեր, իրենց յեվ երանց։

§ 63. ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Յուցական ղերանուն են կոչվում այն բառերը, վորոնք գործ են ածվում գոյականների, ածականների, քվականների յեվ մակբայների փոխարեն, մասնացույց անելով առարկաները կամ երանց հասկոյութները, թիվը յեվ գործողութան ու յեղելութան հասկանիւր։ որինակ՝

Կարծես այն փոքրիկ չին տղան,

Սյնպես նման եր իր վորդուն։

Յուցական ղերանուններն են՝ սա, դա, եւ, այս, այդ, այն, աւյն, եույն, միեւնույն, մուս, այսպեւ, այդպես, այնպես, եույնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, եույնպիսի, այսքան, այդքան, եույնքան, այսչափ, այդչափ, եույնչափ, այստեղ, այնտեղ, եույնտեղ, այդտեղ։

Յուցական ղերանունները յախադասութեան մեջ գործ են ածվում վորպես յենթակա (որինակ՝ մի որ սա յեկավ), վորպես լրացում (որինակ՝ սա գրքի թերթը չկա), վորպես ստորոգյալ կազմող բառ (այս ե մեր սիրելի գիրքը)։

Յուցական ղերանունների հոլովում

Թիվ	Հոլով	Ա Ն Ճ			Ի Ը		
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Ուղ.	սա	դա	նա	այս	այդ	այն
	Սեռ.	սրա	դրա	նրա	սրա	դրա	նրա
	Տր.	սրան	դրան	նրան	սրան	դրան	նրան
	Հայց.	սրան	դրան	նրան	այս	այդ	այն
	Քաղ.	սրանից	դրանից	նրանից	սրանից	դրանից	նրանից
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Փորձ.	սրանով	դրանով	նրանով	սրանով	դրանով	նրանով
	Ներգ.	սրանում	դրանում	նրանում	սրանում	դրանում	նրանում
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Ուղ.	սրանք	դրանք	նրանք	սրանք	դրանք	նրանք
	Սեռ.	սրանց	դրանց	նրանց	սրանց	դրանց	նրանց
	Տր.	սրանց	դրանց	նրանց	սրանց	դրանց	նրանց
	Հայց.	սրանց	դրանց	նրանց	սրանք	դրանք	նրանք
	Քաղ.	սրանցից	դրանցից	նրանցից	սրանցից	դրանցից	նրանցից
Վ Կ Ե Գ Ա Կ Ի	Փորձ.	սրանցով	դրանցով	նրանցով	սրանցով	դրանցով	նրանցով
	Ներգ.	սրանցում	դրանցում	նրանցում	սրանցում	դրանցում	նրանցում

Սա, դա, եւ գործ են ածվում նաև իրերի անունների փոխարեն և այդ դեպքում հայցականը լինում է նույնպես սա, դա, եւ։

§ 64. ՓՈԽԱԳԱՐԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Փոխադարձ ղերանուն են կոչվում այն բառերը, վորոնք գործ են ածվում փոխադարձ գործողութամբ կամ փոխադարձ յեղելութամբ կապված առարկաների անվան տեղ։

Փոխադարձ դերանուններն են միմյանց, իրար, մեկմեկու
(մեկ մեկի). որինակ՝

Յեվ իբար բռնած Սարոն ու Մոսին
Քաշում են, ընկնում խոզապարկուկի,
Ընկնում են գետին, յեկնում միասին,
Դժվար ե իբրե հաղթել մեկ մեկի:

(Հովհ. Թումանյան. «Անուշ»)

Փոխադարձ դերանունները նախադասության մեջ դործ
են ածվում վորպես լրացում:

Փոխադարձ դերանունները յեզակի թիվ չունեն, չունեն
նաև հոգնակի ուղղական հոլով:

Փոխադարձ դերանունների հոլովումը

Թիվ	Հոլով			
Հոգնակի	Ուղ.	միմյանց	իրար	մեկմեկու
	Սեռ.	միմյանց	իրար	մեկմեկու
	Տր.	միմյանց	իրար	մեկմեկու
	Հայց.	միմյանցից	իրարից	մեկմեկուց, մեկմեկուց
	Բաց.	միմյանցով	իրարով	մեկմեկուով
	Գործ.	միմյանց մեջ	իրար մեջ	մեկմեկու մեջ

§ 65. ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հարցական դերանուն են կոչվում այն բառերը, վորոնք
խոսքի մեջ գործ են ածվում գոյականի, ածականի, քվականի
յեվ մակբայի փոխարեն, արտահայտելով հարցում նրանց մա-
սին, որինակ՝

Ե՞ն ո՞վ եր, նա՞նի, վոր կանչում եր մեզ...
(Հ. Թ. «Անուշ»)

Ի՞նչպիսի գիրք ես առել:

Քա՞նի հոգի յեր:

Հարցական դերանուններն են՝ ո՞վ, ի՞նչ, վո՞ր, բա՞նի, վո՞ր-
բան, վո՞րչափ, ի՞նչպի, վո՞րպես, վո՞րպիսի, ի՞նչպիսի, բանի՞ե-
րորդ, վո՞րենդ, ո՞ւր, յե՞րբ:

Հարցական դերանունները գործ են ածվում հարցական
նախադասությունների մեջ և լինում են յեմբական, ստորոգյալ
կազմող բառ յեվ լրացում. որինակ՝

Ո՞վ ե շրջում անդադար (ո՞վ՝ յենթակա):

Ո՞ւմ ե կանչում նա հիմա... (ո՞ւր՝ լրացում):
(Վ. Տերյան)

Ո՞վ ես դու (ո՞վ՝ ստորոգյալ կազմող բառ):

Հարցական դերանուններն ունենում են հարցական նշան (°):

Հարցական դերանունների հոլովումը

Թիվ	Հոլով	Անուշ	Լուսնայ	Վարչայ	Վարչայ	Վարչայ	Վարչայ	Վարչայ	Վարչայ
Հոգնակի	Ուղ.	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու
	Սեռ.	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու
	Տր.	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու
	Հայց.	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց
	Բաց.	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով
	Գործ.	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ
Հոգնակի	Ուղ.	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու
	Սեռ.	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու
	Տր.	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու	մեկմեկու
	Հայց.	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց	մեկմեկուց
	Բաց.	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով	մեկմեկուով
	Գործ.	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ	մեկմեկու մեջ

Հարաբերական գերաճումն են կոչվում նույն հարցական գերաճումները, յերբ իբրեւ են կապում նախագաստութիւնները-որինակ՝

Թող զա նա, ով ուզում ե գալ:

Յես քեզ կարող եմ ասել, թե բանիսն են յեկել:

Ընկերդ կասի, թե ինչպիսի աշակերտ եմ յես:

Ավարտեցին այն աշակերտները, վորոնք լավ էին աշխատում:

Հարաբերական դերանունները չունեն հարցական նշան: Հարաբերական դերանունները հոլովվում են նույնպէս, ինչպէս հարցական դերանունները:

§ 67. ՎՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Վորոշյալ գերաճումն են կոչվում այն բառերը, վորոնք խոսքի մեջ գրվում են պատմողին հայցնի բոլոր գոյականների կամ քականների փոխարեն. որինակ՝

Լենան ետրյուր գիրք ունի: Նրա բոլոր գրքերը խնամքով են պահվում և նորի տպավորութիւնն են թողնում:

—Ո՞ւր են ուսանողները:

—Բոլորը գնացին:

Առաջին խոսքի մեջ յերկրորդ նախադասութեան բոլոր դերանունը գործ ե անվում առաջին նախադասութեան հարյուր թիվականի փոխարեն:

Յերկրորդ խոսքի մեջ յերկրորդ նախադասութեան բոլոր դերանունը գրված ե առաջին նախադասութեան ուսանողները գոյականի փոխարեն:

Վորոշյալ գոյականներն են՝ ամեն, ամենը, բոլոր, յուրաբանցյուր, ամբողջ, ամեն ինչ, յուրաբանցյուր վոք, ամեն վոք:

Խոսքի մեջ վորոշյալ դերանունները գործ են անվում և՛ վորպէս յանթակա, և՛ վորպէս լրացում, և՛ վորպէս ստորոգյալ կազմող բառ:

Որինակ՝

Բոլորը խոսեցին (բոլորը—յենթակա):

Վողջ աշխարհը դառնալու յե կոմունիստական (վողջ—լրացում):

Դրանք բոլորն են (բոլորը—ստորոգյալ կազմող բառ):

Անորու գերաճումն են կոչվում այն բառերը, վորոնք խոսքի մեջ գրվում են խոսողին անհայտ գոյականի, ածականի, քականի և մակբայի փոխարեն. որինակ՝

Աշակերտները դասարանում նստած զբաղվում էին:

Մի բանի աշակերտներ գիրք էին կարդում, մի բանիսը գրում էին, իսկ մյուսները լսում էին մեկին, վորը պատմում եր պիտաներական լագերի կյանքից:

Այս խոսքի մեջ մի բանի անորու դերանունը գործ ե անվում խոսողին անհայտ այն աշակերտների թվի փոխարեն, վորոնք կարդում էին, մեկին անորու դերանունը գրված ե այն աշակերտի անվան փոխարեն, վորը պատմում եր:

Անորու գերաճումներ են՝ ինչ, վոր, ինչ—ինչ, վոմն, մեկը (անորու իմաստով), այսինչ, այնինչ, մի բանիսը, ուրիշ, այլ, ովեպէ, վորեպէ: Խոսքի մեջ անորու դերանունները գործ են անվում և վորպէս յանթակա, և վորպէս ստորոգյալ կազմող բառ և վորպէս լրացում. որինակ՝

Մի բանիսը յեկան (մի բանիսը—յենթակա):

Ինչ վոր աշակերտ հարցնում ե քեզ (ինչ վոր—լրացում):

Իմ ասածն այլ ե (այլ—ստորոգյալ կազմող բառ):

§ 69. ԺԻՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ժիտական գերաճումն են կոչվում այն բառերը, վորոնք ժիտական նախադասութեան մեջ գրվում են ժիտվող գոյականի փոխարեն. որինակ՝

Ինչո՞ւ վաչ վոքի չես հավատում:

Թող սարսափեն տիրապետող դասակարգերը կոմունիստական հեղափոխութիւնից:

Պրոլետարները վոչինչ չունեն կորցնելու այդ հեղափոխութեան մեջ, բացի իրենց շղթաներից: Նրանք վաստակելու յեն մի ամբողջ աշխարհ:

(Կ. Մարքս և Ֆր. Էնգելս. «Կոմունիստական Մանիֆեստ»):

Ժիտական դերանուններ են՝ վոչ, վոք, վոչինչ, վոչ մի, վոչ մեկը:

Ժիտական դերանունները նախադասութեան մեջ գործ են անվում վորպէս յենթակա (որինակ՝ Վոչ վոք չկասանը), վորպէս

առորոգյալ կազմող բառ (որինակ՝ Կապիտալիստական յերկիրներում բանվորի վտասակը վոյնից և նրա ծով կարիքի հանդեպ) և վորպես լրացում (որինակ՝ Ուսուցիչը ձեզնից վոյ մեկից չգովեց):

§ 70. Հ Ո Դ

Վորոշյալ առումով գոյականները, դերանունները մի քանիսը և գոյականաբար գործածվող բառերը ստանում են ստացական կամ վորոշող հոդ:

1. Ստացական հոդերն են ս, գ, ք, ց, վորոնք ունեն ստացական նշանակություն և փոխարինում են իմ, քո, նրա և իր դերանուններին. որինակ՝

Դիրքդ բաց արա:

Դիրքս ընկավ, գրքերս կորան, գրքերդ վերցրու, հուշակը (նրա) տարածվել և աշխարհով մին. խելքին և փչել:

Գիրքս, գիրքդ, գրքես, գրքեդ, հուշակը, խելքին ձեզերը կարելի չե փոխարինել «իմ գիրք», «քո գրքեր», «քո գրքեր», «նրա հուշակը», «նրա խելքին» ձեզերով:

Մեր, ձեր, նրանց, իրենց հոգնակի ստացական (պատկանելիություն) իմաստ արտահայտելու համար հոդերը դրվում են ներ վերջավորության վրա. որինակ՝

Դրքներս հավաքենք, աչքներդ փակեցե՛ք, աչքները փակեցին:

Իրքներս, աչքներդ, աչքները ձեռքը կարելի չե փոխարինել մեր գիրքը կամ մեր գրքեր, ձեր աչքը կամ ձեր աչքեր, նրանց կամ իրենց աչքերը ձեռքով:

2. Վորոգող հոդն է ք կամ ց, զոր դրվելով բառի վրա, արտահայտում է առարկայի վորոշ կամ ծանոթ լինելը. որինակ՝

Այս գիրքը քոնն է: Այդ բարտին բարձրահասակ է:

Բաղաձայնով վերջավորվող բառերն ստանում են ք հոդը, իսկ ձայնավորով՝ ց հոդը. որինակ՝ մատիաք, թուղթք, բայց՝ կատուց, գինից, Հասոց և այլն:

Յերը վորոշյալ բառին հաջորդող բառն օկսվում է ձայնավորով կամ սպ, սկ, սց, սք, գգ, գք, ցց, սփ յերկբաղաձայնով և նրանցից առաջ արտասանվում է թույլ ք, նախորդ բառի ք վորոշող հոդը դառնում է ց. որինակ՝

Դիրքն ընկավ: Սոնիկն առաջ: Պետիկն ստացավ մի գիրք: Աշակերտն գրասենյակում էր:

5. Այս վերջին կանոնն ավելի շուտ բարենհնչյունություն խնդիր է, քան ուղղագրության: Կարելի չե նաև ք հոդը չփոխարինել ց հոդով, հատկապես յերբ խոսքի մեջ բառերը դանդաղ են հաջորդում միմյանց:

Բ Ա Յ

§ 71. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Քայ են կոչվում այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի մի բան անելու կամ մի բան լինելու գաղափար. որինակ՝

գրել, կարդալ, առողջանալ, կապտել, նա գրեց, նա կարդում է, նա կառողջանա, ծաղիկը թարմանալու չե և այլն:

Բայերը պատասխանում են ինչ անել (արել և, արեց և այլն) կամ ինչ լինել (լեզել և, յեղավ) հարցերին: Սոսքի մեջ բայերը գործ են ածվում յերկու ձևով՝

դերբայական և յեղանակային:

Քայի փոփոխությունը գերբայական չեզ յեղանակային ձեզերով կոչվում է խոնարհում:

§ 72. ԴԵՐԲԱՅՆԵՐ ԿԱՄ ԲԱՅԻ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Քայի գերբայական ձեզեր կամ գերբայներ են կոչվում քայի անփոփոխ ձեզերը, վորոնք ցույց են տալիս գործելու կամ լինելու գաղափար, մի բանիսը նայեզ՝ գործելու կամ լինելու ժամանակ. որինակ՝

խոսել, գնացել, սովորում, քնած, լսող և այլն:

Մեր գրական լեզվի մեջ գործ են ածվում յոթը դերբայ. գրանք են.

Անորոգ դերբայ՝ գրել, կարդալ.

Անկասար դերբայ՝ գրում, կարդում.

Ապառնի դերբայ՝ գրելու, կարդալու:

Վաղակասար դերբայ՝ գրել, կարդացել.
 Հառակասար դերբայ՝ գրած, կարդացած.
 Յեքթակայական դերբայ՝ գրող, կարդացող.
 Ըղծական դերբայ՝ (չեմ) գրի, (չես) կարդա:

§ 73. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Անորոշ դերբայը ցույց է տալիս գործելու կամ լինելու ընդհանուր գաղափարը և պատասխանում է ի՞նչ, անել, կամ ի՞նչ, լինել հարցին. որինակ՝

Լսել, գնալ, գրել, կարդալ, հզորանալ, ծաղկել, ամրանալ և այլն:

Անորոշ դերբայը նախադասության մեջ գործ է ածվում և՛ վորպես յեքթակա, և՛ վորպես սսորոգյալի մաս, և՛ վորպես լրացում. որինակ՝

Կարգալը զարգացնում է մարդու դատողությունը (կարգալը՝ յենթակա):

Յես ուզում եմ շատ կարգալ (կարգալ՝ լրացում):

Այս կարգալ չեք (կարգալ՝ սսորոգյալի մաս):

Այս բոլոր դեպքերում անորոշ դերբայը գործ է ածվում գոյականաբար և պատասխանում է գոյականին տրվող հարցերին (Ի՞նչը, ի՞նչի՞, ի՞նչի՞ն և այլն):

Անորոշ դերբայը գոյականաբար գործածվելիս հոլովվում է, յենթարկվելով ու հոլովման՝ միշտ իբրի առումով:

Թիվ	Հոլով	Հարցեր	Ա ն ո Ր Ո Շ	Վ ո Ր Ո Շ Ե Ղ
Յ Ե Կ Ե Գ	Ուղ.	Ի՞նչ(ը)	կարդալ	կարդալը
	Սեռ.	Ի՞նչի՞	կարդալու	կարդալու
	Տր.	Ի՞նչի՞(ն)	կարդալու	կարդալուն
	Հայց.	Ի՞նչ(ը)	կարդալ	կարդալը
	Բաց.	Ի՞նչի՞ց	կարդալուց	կարդալուց
	Գործ.	Ի՞նչո՞վ	կարդալով	կարդալով
Ն Ե Դ Գ	Ներգ.	Ի՞նչո՞ւմ	կարդալում,	կարդալում,
			կարդալու մեջ	կարդալու մեջ

Կարգալում ձևը քիչ գործածական է:

Անորոշ դերբայը հոգնակի չունի, գործածական են կարդալ-ն ես և կարդալներդ, վորոնք նշանակում են «մեր կարդալը», «ձեր կարդալը»:

Անորոշ դերբայն ունենում է ել կամ ալ վերջավորություն. և բաղաձայնը դերբայի բուն վերջավորությունն է, ե և ա ձայնավորները խոնարհիչներ են (լծորդներ):

Քուր այն բայերը, վորոնք անորոշ դերբայում ունեն «ե» խոնարհիչը, կոչվում են առաջին խոնարհման բայեր. որինակ՝ խոսել, գրել, լսել, կտրել, ծաղկել, թափել, և այլն:

Քուր այն բայերը, վորոնք անորոշ դերբայում ունեն «ա» խոնարհիչը, կոչվում են յեկրորդ խոնարհման բայեր. որինակ՝ գնալ, մնալ, կարդալ, աղալ, և այլն:

Վորեք բայ անվանելու համար ասվում է նրա անորոշ դերբայը:

§ 74. ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Անկատար դերբայը ցույց է տալիս մի այնպիսի գործողու-թյան կամ յեղելության գաղափար, վոր ընթացի մեջ է. որինակ՝ գրում, կարդում, լսում, կտրում և այլն:

Անկատար դերբայը նախադասության մեջ առանձին և անկախ չի գործածվում, ոժանդակ բայի հետ (եմ, ես, ե և այլն) կազմում է սսորոգյալ. որինակ՝

Նա գրում է նամակ:

Արան կարգում է իր գրածը:

Անկատար դերբայի վերջավորությունն է ում. անկատար դերբայն ունի նաև ելիս, ալիս վերջավորությունները. որինակ՝ խոսելիս, տեսնելիս, մտնելիս, կարդալիս և այլն:

Ելիս և ալիս վերջավորությամբ անկատար դերբայը նախադասության մեջ գործ է ածվում վորպես սսորոգյալի լրացում. որինակ՝

Ամեն անգամ սենյակ մտնելիս հանում եմ գլխարկս:

Դպրոց մտնելիս տեսա ընկերոջս:

Այս նախադասությունների մեջ մտնելիս անկատար դերբայը հանում եմ և տեսա սսորոգյալների լրացումն է:

§ 75. ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Ապառնի դերբայը ցույց է տալիս կատարելի գործողության կամ յեղելության գաղափար. որինակ՝

լսելու, սովորելու, գնալու, տեսնելու և այլն:

Ապառնի դերբայն ունի ելու, ալու վերջավորությունները, վորոնցով նա նմանվում է անորոշ դերբայի սեռական հոլովին. որինակ՝

ուղ. գրել, սեռ. գրելու, ապառնի դերբայ՝ գրելու.

ուղ. կարդալ, սեռ. կարդալու. ապառնի դերբայ՝ կարդալու:

Ապառնի դերբայը նախադասության մեջ գործ էածվում վորպես ստորագյալ կազմող բառ (ստանում է ոժանդակ բայ). որինակ՝

Գալու յե Համաշխարհային Հոկտեմբերը:

§ 76. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Վաղակատար դերբայը ցույց է տալիս մի այնպիսի գործողության կամ յեղելության գաղափար, վոր ներկայի համեմատությամբ կատարվել վերջացել է. որինակ՝

գրել, կարդացել, լսել, գնացել և այլն:

Առաջին խոնարհման կանոնավոր բայերի վաղակատար դերբայը նման է անորոշին. որինակ՝

Վաղակատար դերբայ Անորոշ դերբայ

գրել գրել

խոսել խոսել

Յերկրորդ խոնարհման բայերը տարբեր են. որինակ՝

Վաղակատար դերբայ Անորոշ դերբայ

գնացել գնալ

կարդացել կարդալ

աղացել աղալ

Վաղակատար դերբայը նախադասության մեջ առանձին և անկախ չի գործածվում, ոժանդակ բայի հետ (եմ, ես և այլն) միայն կազմում է ստորոգյալ. որինակ՝

Յես կարդացել եմ «Անուշ» պոեմը. Մնիկը սովորել է իր դասերը:

Վաղակատար դերբայի վերջավորությունն է ել կամ ացել:

§ 77. ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Հարակատար դերբայը ցույց է տալիս մի այնպիսի գործողության կամ յեղելության գաղափար, վոր ներկայի համեմատությամբ կատարվել վերջացել է, սալով մնալուն հետևանք. որինակ՝

լսած, քնած, կարդացած, գնացած, զարգացած և այլն:

Հարակատար դերբայը նախադասության մեջ գործ էածվում վորպես ստորոգյալ կազմող բառ (ոժանդակ բայի հետ միասին). որինակ՝

Նստած եմ մի որ ու միտք եմ անում...

(Հովհ. Թումանյան)

Հարակատար դերբայը նախադասության մեջ գործ էածվում նաև վորպես յենթակա և վորպես լրացում. որինակ՝

Ասածդ (յենթակա) չանցավ:

Կարդացած (լրացում) գիրքդ դեռ պետք կգա:

Հարակատար դերբայի վերջավորությունն է ած կամ ացած:

§ 78. ՅԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Յենթակայական դերբայը ցույց է տալիս գործողություն կատարողը, յեղելության առարկան. որինակ՝

գրող, կարդացող, ծաղկող, խոսող, գնացող, տեսնող և այլն:

Յենթակայական դերբայը նախադասության մեջ գործ էածվում վորպես յենթակա, վորպես լրացում և վորպես ստորոգյալ կազմող բառ (եմ, ես, ե... բայի ոգնությամբ). որինակ՝

Կարդացողը (յենթակա) գիտուն կլինի:

Կարդացող (լրացում) աշակերտը շատ բան կիմանա:

Նա լավ կարդացող է (ստորոգյալ):

Յենթակայական դերբայի վերջավորությունն է ող կամ ացող:

§ 79. ԸՂՋԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ըղձական դերբայը ցույց է տալիս մի այնպիսի գործողության կամ յեղելության գաղափար, վորի կատարումը ժխտվելու յե. որինակ՝

Այս դերբայը կոչվում է նաև ժխտական դերբայ.
(չեմ) գրի, (չեմ) գնա, (չեմ) խոսի, (չեմ) տեսնի, (չեմ)
գա և այլն:

Այս դերբայը չպետք է շփոթել նա գրի, նա գնա և այլ
ձևերի հետ, վորոնք դերբայ չեն:

Ընթացիկ դերբայը նախադասութեան մեջ առանձին և ան-
կախ չի գործածվում. նա ոժանդակ բայի ժխտական ձևի հետ
(չեմ, չես և այլն) կաղմում է ստորոգյալ. որինակ՝

Տես, կխոսվեմ,
Ձեմ սիրի քեզ ել,
Ձեմ ուզի քեզ ել,
Լաց կլինեմ յես:

(Հովհ. Թումանյան. «Անուշ»)

Ըղձական դերբայն ունենում է ի կամ ա վերջավորութիւններ:

§ 80. ՅԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

Յեղանակային ձեվեր կոչվում են բայի փոփոխական
ձեվերը, վորոնցով արտահայտվում է յեմբայի գործողութիւն-
ը յեղանակով, ժամանակով, քվով ու դեմքով:

Բայի յեղանակային ձեվը միշտ լինում է ստորգյալ:

Յեղանակները հինգ են. սահմանական, երամայական,
զղնական, պայմանական յեվ հարկագրական:

§ 81. Դ Ե Մ Ք

Բայի յեղանակային ձևն ունենում է յերեք դեմք՝ I, II և III.

1. Սուստիք դեմքը ցույց է տալիս խոսողի գործողութիւն-
ը կամ յեղելութիւնը. որինակ՝

գրեցի (չես), կարդացի (յես), քնել եմ (չես) և այլն:

2. Յերկուրդ դեմքը ցույց է տալիս խոսակցի գործողութիւն-
ը կամ յեղելութիւնը. որինակ՝

գրեցիր (դու), կարդացիր (դու), քնել ես (դու) և այլն:

3. Յերրորդ դեմքը ցույց է տալիս վոչ խոսողի և վոչ ել
խոսակցի, այլ մի այլ առարկայի գործողութիւնը կամ յեղե-
լութիւնը, վորի մասին խոսվում է. որինակ՝

գրեց (նա), կարդաց (նա), քնել է (նա) և այլն:

§ 82. Թ Ի Վ

Դեմքի հետ միասին բայի յեղանակային ձևը ցույց է տա-
լիս նաև թիվ, այսինքն թե՛ գործող կամ լինող անձը մեկ է,
թե՛ մեկից ավելի. որինակ՝

գրեց, գրի, գրում ե:

Այս ձևերից հայտնի յն դառնում, վոր գրողը մի հոգի յե,
մինչդեռ՝

գրեցին, գրեն, գրում են ձևերից յերևում է, վոր գրելու
գործողութիւնն կատարողները մեկից ավելի յեն:

Բայն ունի յերկու թիվ՝ յեզակի և եոգնակի:

Յեթե բայը ցույց է տալիս, վոր գործող կամ լինող անձը
յեզակի յե, բայց թիվը յեզակի յե, իսկ յեթե հոգնակի յե, բայի
թիվը հոգնակի յե:

§ 83. ԺԱՄԱՆԱԿ

Բայի ժամանակը ցույց է տալիս գործողութեան կամ յե-
ղելութեան կատարվելու ժամանակը:

Բայի ժամանակները յերեք են՝ ներկա, անցյալ և ապառնի:

1. Ներկա ժամանակը ցույց է տալիս, թե գործողութիւնը
կամ յեղելութիւնը սկսվել է կամ տեղի յն ունենում խոսելու
վայրկյանին և դեռ շարունակվում է. որինակ՝

գրում եմ. կարդում եմ քո գիրքը:

Անցյալ ժամանակը ցույց է տալիս, թե գործողութիւնը
կամ յեղելութիւնը տեղի յն ունեցել խոսելու վայրկյանից ա-
ռաջ. որինակ՝ գրում եյի. գրեցի. կարդացել եյի քո գիրքը:

3. Ապառնի ժամանակը ցույց է տալիս կատարվելիք
գործողութիւնը կամ յեղելութիւնը, այսինքն թե մի բան ար-
վելու կամ մի բան լինելու յն վորոշ ժամանակից հետո.
որինակ՝ գրելու յեմ, կարդալու յեմ:

Ներկա ժամանակը կարող է լինել միայն մի տեսակ, քա-
նի վոր խոսելու վայրկյանը մի յե, համարյա անըստանելի
Բայց անցյալը և ապառնին կարող են լինել բազմաթիվ: Այսոր-
վա համեմատութեամբ յերեկն անցյալ է, իսկ նախանցյալ որը՝
ավելի վաղ անցյալ է, 3-րդ, 4-րդ, 5-րդ որերն ել ավելի վաղ
անցյալ են, քան նախանցյալ որը: Նույնը և ապառնին. վաղը
այսորվա համեմատութեամբ ապառնի յե, այսորը յերեկվա հա-

մեծատուրթյամբ նույնպես ապառնի յե, յերեկը նախանցյալ որ-
վա համեմատությամբ նույնպես ապառնի յե: Այդ իսկ պատ-
հառով անցյալ և ապառնի ժամանակները մի քանի տեսակ են
լինում:

§ 84. ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Բայի հաստատական կամ դրական բնույթի խոնարհումն
արտահայտում է յեղելությունը և գործողությունը դրական
իմաստով: Խոնարհումը կատարվում է կամ պարզ ձևով. որինակ՝
գրեցի, գրիր, գրեմ կամ գրեբալով և եմ բայով. որինակ,
գրում եմ:

§ 85. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

1. Սահմանական յեղանակին են պատկանում բայի այն
բոլոր ձեվերը, վորոնք ցույց են տալիս ստույգ կատարվող, կա-
տարվելիք կամ կատարված գործողություն և յեղելություն. որի-
նակ՝

«Յեկավ վիթխարի ծերունի մի մարդ,
կանգնեց վրդովված տղերանց միջին»... (Հ. Թ.):

«Անլուելի վեզում է պղտոր ջուրը Դեբեդի»... (Հ. Թ.):

2. Սահմանական յեղանակն ունի ինը ժայանակ՝ ներկա
անցյալ անկատար, ապառնի, անցյալ ապառնի, վաղակատար
անցյալ վաղակատար, հարակատար, անցյալ հա- կատար յեվ ան-
ցյալ կատարյալ:

Սահմանական յեղանակի ժամանակների մեծ մասի կադ-
մության մեջ մասնակցում է ոժանդակ բայը:

Ոժանդակ բայ է կոչվում «եմ» բայը, յերբ նախադասու-
թյան մեջ միանալով գերբայներին, կազմում է ստորոգյալ.
որինակ՝

Աշակերտը սովորում է (ստորոգյալ) դասը: (Ոժանդակ
բայը անկատար դերբայի հետ):

Պետիկը գնացել է (ստորոգյալ). (Ոժանդակ բայը վաղա-
կատար դերբայի հետ):

Իմ բոլոր գնահատականները նշանակված են (ստորոգյալ).
(Ոժանդակ բայը հարակատար դերբայի հետ):

ՈՅԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Ներկա		Անցյալ	
Յեզակի	Հոգնակի	Յեզակի	Հոգնակի
եմ	ենք	եյի	եյինք
ես	եք	եյիր	եյիք
ե	են	եր	եյին

Սահմանական յեղանակի ներկա, անցյալ անկատար, ապառ-
նի, անցյալ ապառնի, վաղակատար, անցյալ վաղակատար, հարակա-
տար, անցյալ հարակատար ժամանակները կազմվում են խոնարհվող
բայի համապատասխան դերբայի և ոժանդակ բայի ներկա ու
անցյալ ժամանակների բաղադրությամբ և կոչվում են բաղադր-
յալ ժամանակներ. որինակ՝

Դերբայ	Ոժանդակ բայ	Սահմանական յեղանակի ժամանակը
անկատար՝ գրում	ներկա՝ եմ	ներկա՝ գրում եմ
անկատար՝ գրում	անցյալ՝ եյի	անկատար անցյալ՝ գրում եյի
ապառնի՝ գրելու	ներկա՝ եմ	ապառնի՝ գրելու եմ
ապառնի՝ գրելու	անցյալ՝ եյի	անցյալ ապառնի՝ գրելու եյի
վաղակատար՝ գրել	ներկա՝ եմ	վաղակատար՝ գրել եմ
վաղակատար՝ գրել	անցյալ՝ եյի	անցյալ վաղակատար՝ գրել եյի
հարակատար՝ գրած	ներկա՝ եմ	հարակատար՝ գրած եմ
հարակատար՝ գրած	անցյալ՝ եյի	անցյալ հարակատար՝ գրած եյի

Յերբ նախորդ բառը վերջավորվում է ձայնավորով, ոժան-
դակ բայի միավանկ ձևերն ստանում են չ (գալու յե):

§ 86. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿԻ ԲԱՆԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Սահմանական յեղանակի ներկա ցույց է տալիս, վոր
յնեքականի գործողությունը կամ յեղելությունը սկսվել է յեվ
կատարման ընթացքի մեջ է:

Ներկա ժամանակը կազմվում է անկատար դերբայով (գրում,
կարդում) և ոժանդակ բայի ներկայով (եմ, ես, ե...): որինակ՝

Յեզակի	Հոգնակի	Յեզակի	Հոգնակի
գրում եմ	գրում ենք	կարդում եմ	կարդում ենք
գրում ես	գրում եք	կարդում ես	կարդում եք
գրում ե	գրում են	կարդում ե	կարդում են

Անցյալ անկասարք ցույց է տալիս յենթակայի անցյալում զերացի մեջ գտնվող գործողությունը կամ յեղելությունը. որին նաև՝

Անցյալ անկասարք կազմվում է անկասարքերբայով (գրում, կարդում) և ոժանգակ բայի անցյալով (եյի, եյիր, եր...) որին նաև՝

Ֆեզակի	Հոգնակի	Ֆեզակի	Հոգնակի
գրում եյի	գրում եյինք	կարդում եյի	կարդում եյինք
գրում եյիր	գրում եյիք	կարդում եյիր	կարդում եյիք
գրում եր	գրում եյին	կարդում եր	կարդում եյին

Ապառնին ցույց է տալիս յենթակայի մի գործողությունը կամ յեղելությունը, վոր կասարվելու յե խոսելու վայրկյանից հետո. որին նաև՝

Բոլշեվիկ է Շիր-կանալը... այն վայրերը լերե ու բարբադ, Վորոնք իրենց ծնված որից այրի եյին, մերկ անապատ, Այս որից յետ հազնելու յեն սիրակարոտ հարսների պես...

(Հակ. Հակոբյան)

Ապառնին կազմվում է ապառնի դերբայով (գրելու, կարդալու) և ոժանգակ բայի ներկայով (եմ, ես, ե...) որին նաև՝

Ֆեզակի	Հոգնակի	Ֆեզակի	Հոգնակի
գրելու յեմ	գրելու յենք	կարդալու յեմ	կարդալու յենք
գրելու յես	գրելու յեր	կարդալու յես	կարդալու յեր
գրելու յե	գրելու յեն	կարդալու յե	կարդալու յեն

Անցյալ ապառնին ցույց է տալիս յենթակայի մի գործողությունը կամ յեղելությունը, վոր մի անցյալի համեմատությամբ հետո յեր կասարվելու:

Անցյալ ամսվա սկզբին մենք գնալու եյինք համբար, յերբ մի դեպք մեզ մի քիչ ուշացրեց:

Անցյալ ապառնին կազմվում է ապառնի դերբայով (գրելու, կարդալու) և ոժանգակ բայի անցյալով (եյի, եյիր, եր). որին նաև՝

Ֆեզակի Հոգնակի Ֆեզակի Հոգնակի

գրելու եյի	գրելու եյինք	կարդալու եյի	կարդալու եյինք
գրելու եյիր	գրելու եյիք	կարդալու եյիր	կարդալու եյիք
գրելու յեր	գրելու եյին	կարդալու յեր	կարդալու եյին

Վաղակասար ժամանակը ցույց է տալիս յենթակայի մի գործողությունը կամ յեղելությունը, վոր ներկայի համեմատությամբ անցել վերջացել է. որին նաև՝

Շատ է լացել համբար լացով Շիրակը իր դարդի մասին, Իսկ այսորից նա լի թորով թող ամենից բարձր խոսի: Շատ է սանջվել ու տկացել անհարազատ մարդոց ձեռքին, Իսկ այսորից թող նվաճի ու տիրանա իրնոր կյանքին: Մեծ ու մեծ է Շիրկանալը՝ կամարածեմ, գեղեցկաթով, Փաթաթվել է, վոնց է գրկել Շիրահարթը յերկու թաթով:

(Հակոբ Հակոբյան. «Բոլշեվիկ է Շիրկանալը»)

Վաղակասար ժամանակը կազմվում է վաղակասար դերբայով (գրել, կարդացել) և ոժանգակ բայի ներկայով (եմ, ես, ե...) որին նաև՝

Ֆեզակի	Հոգնակի	Ֆեզակի	Հոգնակի
գրել եմ	գրել ենք	կարդացել եմ	կարդացել ենք
գրել ես	գրել եք	կարդացել ես	կարդացել եք
գրել ե	գրել են	կարդացել ե	կարդացել են

Անցյալ վաղակասար ցույց է տալիս յենթակայի մի գործողությունը կամ յեղելությունը, վոր անցել վերջացել է անցյալի մի ժամանակակետի համեմատությամբ:

Վաղակասար անցյալը կազմվում է վաղակասար դերբայով (գրել, կարդացել) և ոժանգակ բայի անցյալով. որին նաև՝

Ֆեզակի Հոգնակի Ֆեզակի Հոգնակի

գրել էյի գրել էյինք կարդացել էյի կարդացել էյինք
գրել էյիր գրել էյիք կարդացել էյիր կարդացել էյիք
գրել եր գրել էյին կարդացել եր կարդացել էյին

Հարակատար ժամանակը ցույց է տալիս յենթակայի մի գործողություն կամ յեղեղություն, վոր ներկայի համեմատությամբ կատարված վերջացած է, վորի հետեվանքը հարատեվում է մինչեվ խոսողի ներկան. որինակ՝

Յես կանգնած եմ վայրի ժայռի կտտարին...
(Վ. Տերյան).

Նստած եմ մենակ ու միտք եմ անում...
(Հ. Թ.)

Հարակատար ժամանակը կազմվում է հարակատար դերբայով (գրած, կարդացած) և ոժանդակ բայի ներկայով (եմ, ես, ե...), որինակ՝

Ֆեզակի Հոգնակի Ֆեզակի Հոգնակի

գրած եմ գրած ենք կարդացած եմ կարդացած ենք
գրած ես գրած եք կարդացած ես կարդացած եք
գրած ե գրած են կարդացած ե կարդացած են

Անցյալ հարակատար ցույց է տալիս յենթակայի մի գործողություն կամ յեղեղություն, վոր մի անցյալի համեմատությամբ կատարված վերջացած է, բայց վորի հետեվանքը հարատեվել է մինչեվ այդ անցյալը:

Հարակատար անցյալը կազմվում է հարակատար դերբայով (գրած, կարդացած) և ոժանդակ բայի անցյալով (էյի, էյիր, ե...), որինակ՝

Ֆեզակի Հոգնակի Ֆեզակի Հոգնակի

գրած էյի գրած էյինք կարդացած էյի կարդացած էյինք
գրած էյիր գրած էյիք կարդացած էյիր կարդացած էյիք
գրած եր գրած էյին կարդացած եր կարդացած էյին

§ 87. ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿԻ ՊԱՐԶ ԺԱՄԱՆԱԿԸ

Անցյալ կատարյալ

Անցյալ կատարյալը ցույց է տալիս յենթակայի մի գործողություն կամ յեղեղություն, վոր կատարվել վերջացել է անցյալում, առանց համեմատվելու վորեվ ժամանակակետի հետ. որինակ՝

Դիժ մոծակի պարի ժամին,
Զարկեց հանկարծ աշնան քամին...

(Հ. Թ.)

Անցյալ կատարյալ ժամանակը սահմանափակ յեղանակի միակ պարզ ժամանակն է, վոր կազմում ենք բայարմատով, ավելացնելով նրան եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին վերջավորությունները առաջին խոնարհման բայերի համար և ացի, ացիր, աց, ացինք, ացիք, ացին վերջավորությունները՝ յերկրորդ խոնարհման բայերի համար. որինակ՝

Ֆեզակի Հոգնակի Ֆեզակի Հոգնակի

գր—եցի գր—եցինք կարդ—ացի կարդ—ացինք
գր—եցիր գր—եցիք կարդ—ացիր կարդ—ացիք
գր—եց գր—եցին կարդ—աց կարդ—ացին

§ 88. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Հրամայական յեղանակն արտահայտում է գործելու կամ լինելու հրաման, բեղադրանք. որինակ՝

Դուրս յեկե՛ք կրկին շիրմից, խավարից,
Դուրս յեկե՛ք տեսնեմ, շողափե՛մ, լսեմ,
Կյանքով շնչեցե՛ք, ապրեցե՛ք նորից,
Լցրե՛ք պոետի հաճույքը վսեմ...

(Հովհ. Թումանյան. «Անուշ»)

Հրամայական յեղանակն ունի միայն մի յերկրորդ դեմք, բայց յերկու թիվ՝ յեզակի և հոգնակի:
Առաջին խոնարհման կանոնավոր բայերն ունեն յեզա-

կի թվում՝ իր վերջավորութունն, իսկ հոգնակի թվում՝ եցեք-
որինակ՝

Յեզակի	Հոգնակի
գրի՛ր	գրեցե՛ք
խոսի՛ր	խոսեցե՛ք
լսի՛ր	լսեցե՛ք

Յերկրորդ խոնարհման կանոնավոր բայերն ունենում են
յեզակի թվում՝ ա, հոգնակի թվում՝ ացեք վերջավորութուն-
որինակ՝

Յեզակի	Հոգնակի
կարդա՛	կարդացե՛ք
գնա՛	գնացե՛ք
մնա՛	մնացե՛ք

Հրամայական յեղանակի բայերի վերջին վանկի վրա սո-
վորաբար դրվում է շեշտ (՝) :

§ 89. ԸՆԶԱՆԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ըղծական յեղանակին են պատկանում բայի յեղանակային
այն ձեվերը, վորոնք արտահայտում են մի բան անելու կամ
լինելու ցանկություն, իդն, հենչանք. որինակ՝

Յեվ ինձ ժպտա արշալույսին
Գարնան մատաղ արեգակ,
Յեվ գիշերով իմ ճակատին
Խաղա գողտրիկ վառ լուսնակ:

(Հովհ. Հովհաննիսյան)

Ըղծական յեղանակն ունի յերկու պարզ ժամանակ՝ ապառ-
նի և անցյալ ապառնի:

1. Ըղծական ապառնին ցույց է տալիս յենթակայի ցան-
կալի, քղծալի մի գործողություն կամ յեղելություն, վոր կա-
տարելի կարող է լինել խոսելու վայրկյանից անմիջապես հե-
տ. որինակ՝

«Նանի. թո՛ղ գնամ, բաղեմ ու հյուսեմ:

Են սարի լանջին «ջան գյուղում» ասեմ»:

(Հովհ. Թումանյան)

Ըղծական ապառնին կազմվում է անորոշ դերբայից, վորի
մեջ 1 վերջավորութունը փոխարինվում է մ, ս, - ցք, ք, ց վեր-
ջավորութուններով. որինակ՝

ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Հոգնակի
գրեմ	գրեցեք
գրես	գրեք
գրի	գրեց

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Հոգնակի
կարդամ	կարդացեք
կարդաս	կարդաք
կարդա	կարդաց

Առաջին խոնարհման բայերը ըղծական ապառնի ժամա-
նակի յերկրորդ դեմքում ունենում են ի վերջավորութուն, բայց
յերբեմն նաև է վերջավորութուն. որինակ՝

գրե, հնչե:

Վտակն անուշ խոխոջե:

(Հովհ. Հովհաննիսյան)

Ըղծական ապառնիի տարբեր ձևեր յերբեմն գործ են ած-
վում իբրև հրամայական. որինակ՝

գրե՛նք, խոսե՛նք, կարդա՛նք և այլն:
Գնա՛նք մենք այնտեղ...

2. Ըղծական անցյալ ապառնին ցույց է տալիս յենթակայի
մի գործողություն կամ յեղելություն, վորի կատարումը ան-
ցյալում՝ ցանկալի չէր, բայց հեղի ունեցած չէ. որինակ՝

Լինեյի չորան՝ սարերում հեռու,

Գայի, անցնեյի վրանիս մոտով...

(Վ. Տերյան)

Ըղծական անցյալ ապառնին կազմվում է անորոշ դերբայից,

Վորի մեջ 1-ն փոխարինվում է յի, յիւ, ւ, յիմք, յիք, յից
 Չափորութուններով. որինակ՝ (անորոշ դերբայ՝ գրեւ, կարդաւ)՝

ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Հոգնակի
գրեյի	գրեյիք
գրեյիւ	գրեյիք
գրեւ	գրեյիք

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Հոգնակի
կարդայի	կարդայիք
կարդայիւ	կարդայիք
կարդաւ	կարդայիք

§ 90. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Պայմանական յեղանակին պատկանող բայանեվերը ցույց
 տալիս յենթակայի մի այնպիսի գործողությունը կամ յեղեղա-
 րությունը, վորի կատարումը յենթադրական է. որինակ՝

Յեվ դու կմտնես այն գործարանի
 կամարների տակ,
 Վորտեղ յեռում է թափով աշխատանք,
 Կեսեսես աշխտեղ արհեստանոցի
 Հարազատ զավակ կաղնի բանվորին...
 (Հակ. Հակոբյան)

Պայմանական յեղանակը կազմվում է ըզնական յեղանա-
 վի ձևերից, վորոնց սկզբից ավելացվում է կ մասնիկը. որինակ՝

Ըզնական	Պայմանական
գնամ	կգնամ
գնայի	կգնայի

Կ մասնիկը կոչվում է պայմանական յեղանակի և գեր-
 վում է բայարմատի հետ միտք միասին:

Պայմանական յեղանակն ունի յերկու ժամանակ՝ ապառնի
 և անցյալ ապառնի:

Պայմանական կամ ենթադրական ապառնին ցույց է տալիս
 յենթակայի մի այնպիսի գործողությունը կամ յեղեղու-
 րի կատարումը յենթադրվում է անհերքելի և անհերքելի և անհերքելի
 և անհերքելի կամ անհերքելի գրան. որինակ՝

Յեթե խոստանաս ինձ գիրք տալ, այսօր կգամ քեզ մոտ:
 Կգամ բայածինը ցույց է տալիս, վոր յենթակայի գործողությու-
 նը կկատարվի անհերքելի և անհերքելի և վորոշ պայմանով:

Պայմանական ապառնին կազմվում է ըզնական ապառնից,
 վորի վրա ավելանում է կ պայմանական յեղանակիչը. որինակ՝

ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Պայմանական	Ըզնական	Պայմանական
Ըզնական	Պայմանական	Ըզնական	Պայմանական
գրեւ	կգրեւ	գրենք	կգրենք
գրես	կգրես	գրեք	կգրեք
գրի	կգրի	գրեն	կգրեն

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Պայմանական	Ըզնական	Պայմանական
Ըզնական	Պայմանական	Ըզնական	Պայմանական
կարդամ	կկարդամ	կարդաք	կկարդանք
կարդաս	կկարդաս	կարդաք	կկարդաք
կարդա	կկարդա	կարդան	կկարդան

Պայմանական կամ ենթադրական անցյալ ապառնին ցույց
 է տալիս յենթակայի մի այնպիսի գործողությունը կամ յեղե-
 րությունը, վորը չի կատարվել, բայց կկատարվեր, յեթե նրան նա-
 խորհեր մեկ ուրիշ գործողությունը կամ յեղեղությունը. որինակ՝

Ու կտանջվեր նա ե՛լ նորից, թե չծնվեր հաղթ պատանի...

Պայմանական անցյալը կազմվում է ըզնական անցյալից,
 վորի վրա ավելանում է կ պայմանական յեղանակիչը. որինակ՝

ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Յեզակի	Պայմանական	Ըզնական	Պայմանական
Ըզնական	Պայմանական	Ըզնական	Պայմանական
գրեյի	կգրեյի	գրեյինք	կգրեյինք
գրեյիւ	կգրեյիւ	գրեյիք	կգրեյիք
գրեւ	կգրեւ	գրեյին	կգրեյին

Ֆեզակի		Հոգնակի	
Ըղծական	Պայմանական	Ըղծական	Պայմանական
կարգայի	կկարգայի	կարգայինք	կկարգայինք
կարգայիր	կկարգայիր	կարգայիք	կկարգայիք
կարգար	կկարգար	կարգային	կկարգային

§ 91. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Հարկադրական յեղանակին պատկանող բայանձեվերը ցույց են տալիս յենթակայի մի այնպիսի գործողությունը կամ յեղելությունը, վոր կատարվելու յե անհրաժեշտաբար կամ անպայման:

Հարկադրական յեղանակը կազմվում է ըղծական յեղանակի ձևերից, վորոնց առաջ դրվում է պիտի բառը. որինակ՝

Ըղծական	Հարկադրական
գրեմ	պիտի գրեմ (նաև պետք է գրեմ)
կարդամ	պիտի կարդամ
գրեյի	պիտի գրեյի
կարդայի	պիտի կարդայի

Պիտի բառը կոչվում է հարկադրական յեղանակի, Հարկադրական յեղանակն ունի յերկու ժամանակ՝ ապառնի և անցյալ ապառնի:

Հարկադրական ապառնին ցույց է տալիս յենթակայի մի այնպիսի գործողությունը կամ յեղելությունը, վոր կատարվելու յե խոսելու վայրկյանից հետո անհրաժեշտաբար կամ անպայման, որինակ՝

Հարկադրական ապառնին կազմվում է ըղծական ապառնիի ձևերից, վորի առաջ դրվում է պիտի հարկադրական յեղանակիչը. որինակ՝

Ֆեզակի	Հոգնակի
պիտի գրեմ	պիտի գրենք
պիտի գրես	պիտի գրեք
պիտի գրի	պիտի գրեն

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ֆեզակի	Հոգնակի
պիտի կարդամ	պիտի կարդանք
պիտի կարդաս	պիտի կարդաք
պիտի կարդա	պիտի կարդան

2. Հարկադրական անցյալը ցույց է տալիս յենթակայի մի այնպիսի գործողությունը կամ յեղելությունը, վորը անհրաժեշտաբար կամ անպայման պիտի կատարվեր անցյալում:

Հարկադրական անցյալը կազմվում է ըղծական անցյալի ձևերից, վորոնց առաջ դրվում է պիտի հարկադրական յեղանակիչը. որինակ՝

Ֆեզակի	Հոգնակի
պիտի գրեյի	պիտի գրեյինք
պիտի գրեյիր	պիտի գրեյիք
պիտի գրեր	պիտի գրեյին

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ֆեզակի	Հոգնակի
պիտի կարդայի	պիտի կարդայինք
պիտի կարդայիր	պիտի կարդայիք
պիտի կարդար	պիտի կարդային

§ 92. ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ
ՀԱՍՏԱՍՏԱԿԱՆ ԿԱՄ ԴՐԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

1. Փահմանական յեղանակ

ՄՈՒԱԶԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԳՐԵԼ		ՅԵՐԿՐՈՐԿ ԽՈՆԱՐՀՈՒՄ ԿԱՐԴԱԼ	
Թիվ	Դեմք	Ն Ե Ր Կ Ա (անկասար)	
Փեղակ	I	զրում եմ	կարգում եմ
	II	զրում ես	կարգում ես
	III	զրում ե	կարգում ե
Հոգնակ	I	զրում ենք	կարգում ենք
	II	զրում եք	կարգում եք
	III	զրում են	կարգում են
Ա ն գ յ ա լ ա ն կ ա ս ա Ր			
Փեղակ	I	զրում եյի	կարգում եյի
	II	զրում եյիր	կարգում եյիր
	III	զրում եր	կարգում եր
Հոգնակ	I	զրում եյինք	կարգում եյինք
	II	զրում եյիք	կարգում եյիք
	III	զրում եյին	կարգում եյին
Ա ա ա ռ ն ի			
Փեղակ	I	զրելու յեմ	կարգալու յեմ
	II	զրելու յես	կարգալու յես
	III	զրելու յե	կարգալու յե
Հոգնակ	I	զրելու յենք	կարգալու յենք
	II	զրելու յեք	կարգալու յեք
	III	զրելու յեն	կարգալու յեն

Թիվ	Դեմք	Ա ն գ յ ա լ ա ա ա ռ ն ի	
Փեղակ	I	զրելու եյի	կարգալու եյի
	II	զրելու եյիր	կարգալու եյիր
	III	զրելու եր	կարգալու եր
Հոգնակ	I	զրելու եյինք	կարգալու եյինք
	II	զրելու եյիք	կարգալու եյիք
	III	զրելու եյին	կարգալու եյին
Վ ա ղ ա կ ա ս ա Ր			
Փեղակ	I	զրել եմ	կարգացել եմ
	II	զրել ես	կարգացել ես
	III	զրել ե	կարգացել ե
Հոգնակ	I	զրել ենք	կարգացել ենք
	II	զրել եք	կարգացել եք
	III	զրել են	կարգացել են
Ա ն գ յ ա լ Վ ա ղ ա կ ա ս ա Ր			
Փեղակ	I	զրել եյի	կարգացել եյի
	II	զրել եյիր	կարգացել եյիր
	III	զրել եր	կարգացել եր
Հոգնակ	I	զրել եյինք	կարգացել եյինք
	II	զրել եյիք	կարգացել եյիք
	III	զրել եյին	կարգացել եյին

Թիվ	Դեմք	Հ ա ր ա կ ա ս ա ր	
Յեզակի	I	գրած հմ	կարդացած հմ
	II	գրած հս	կարդացած հս
	III	գրած հ	կարդացած հ
Հոգնակի	I	գրած ենք	կարդացած ենք
	II	գրած եք	կարդացած եք
	III	գրած են	կարդացած են
Ա ն գ յ ա լ ճ ա ր ա կ ա ս ա ր			
Յեզակի	I	գրած ելի	կարդացած ելի
	II	գրած եյիր	կարդացած եյիր
	III	գրած եր	կարդացած եր
Հոգնակի	I	գրած եյինք	կարդացած եյինք
	II	գրած եյիք	կարդացած եյիք
	III	գրած եյին	կարդացած եյին
Ա ն գ յ ա լ կ ա ս ա ր յ ա լ			
Յեզակի	I	գրեցի	կարդացի
	II	գրեցիր	կարդացիր
	III	գրեց	կարդաց
Հոգնակի	I	գրեցինք	կարդացինք
	II	գրեցիք	կարդացիք
	III	գրեցին	կարդացին

2. Հրամայական յեղանակ

Թիվ	Դեմք	Առաջին խոնարհում	Յերկրորդ խոնարհում
Յեզակի	II	գրի՛ր	կարդա՛
	II	գրեցե՛ք	կարդացե՛ք

3. Ըղծական յեղանակ

Թիվ	Դեմք	Ա պ ա ո ճ ի	
Յեզակի	I	գրեմ	կարդամ
	II	գրես	կարդաս
	III	գրի	կարդա
Հոգնակի	I	գրենք	կարդանք
	II	գրեք	կարդաք
	III	գրեն	կարդան
Ա ն գ յ ա լ ա պ ա ո ճ ի			
Յեզակի	I	գրեյի	կարդայի
	II	գրեյիր	կարդայիր
	III	գրեր	կարդար
Հոգնակի	I	գրեյինք	կարդայինք
	II	գրեյիք	կարդայիք
	III	գրեյին	կարդային

4. Պայմանական յեղանակ

Թիվ	Դեմք	Ապանցի	
Ֆեզակի	I	կգրեմ	կկարդամ
	II	կգրես	կկարդաս
	III	կգրի	կկարդա
Վիտեզակի	I	կգրենք	կկարդանք
	II	կգրեք	կկարդաք
	III	կգրեն	կկարդան
Անցյալ ապանցի			
Ֆեզակի	I	կգրեյի	կկարդայի
	II	կգրեյիր	կկարդայիր
	III	կգրեր	կկարդար
Վիտեզակի	I	կգրեյինք	կկարդայինք
	II	կգրեյիք	կկարդայիք
	III	կգրեյն	կկարդային

5. Հարկագրական յեղանակ

Թիվ	Դեմք	Ապանցի	
Ֆեզակի	I	պիտի գրեմ	պիտի կարդամ
	II	պիտի գրես	պիտի կարդաս
	III	պիտի գրի	պիտի կարդա
Վիտեզակի	I	պիտի գրենք	պիտի կարդանք
	II	պիտի գրեք	պիտի կարդաք
	III	պիտի գրեն	պիտի կարդան

Թիվ	Դեմք	Անցյալ ապանցի	
Ֆեզակի	I	պիտի գրեյի	պիտի կարդայի
	II	պիտի գրեյիր	պիտի կարդայիր
	III	պիտի գրեր	պիտի կարդար
Վիտեզակի	I	պիտի գրեյինք	պիտի կարդայինք
	II	պիտի գրեյիք	պիտի կարդայիք
	III	պիտի գրեյն	պիտի կարդային

§ 93. ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

1. Սահմանական յեղանակ

ՍԽԱԶԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ		ՖԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ	
Թիվ	Դեմք	Ներկա	
Ֆեզակի	I	չեմ գրում	չեմ կարդում
	II	չես գրում	չես կարդում
	III	չի գրում	չի կարդում
Վիտեզակի	I	չենք գրում	չենք կարդում
	II	չեք գրում	չեք կարդում
	III	չեն գրում	չեն կարդում
Անցյալ անկատար			
Ֆեզակի	I	չեյի գրում	չեյի կարդում
	II	չեյիր գրում	չեյիր կարդում
	III	չեր գրում	չեր կարդում
Վիտեզակի	I	չեյինք գրում	չեյինք կարդում
	II	չեյիք գրում	չեյիք կարդում
	III	չեյին գրում	չեյին կարդում

Թիվ	Դեմք	Ա. պ ա ո ն ի	
Ֆեզակի	I	չեմ գրելու	չեմ կարդալու
	II	չես գրելու	չես կարդալու
	III	չի գրելու	չի կարդալու
Հոգնակի	I	չենք գրելու	չենք կարդալու
	II	չեք գրելու	չեք կարդալու
	III	չեն գրելու	չեն կարդալու
Ա. ց ց յ ա լ ա պ ա ո ն ի			
Ֆեզակի	I	չեյի գրելու	չեյի կարդալու
	II	չեյիր գրելու	չեյիր կարդալու
	III	չեր գրելու	չեր կարդալու
Հոգնակի	I	չեյինք գրելու	չեյինք կարդալու
	II	չեյիք գրելու	չեյիք կարդալու
	III	չեյին գրելու	չեյին կարդալու
Վ. ա դ ա կ ա ս ա Ր			
Ֆեզակի	I	չեմ գրել	չեմ կարդացել
	II	չես գրել	չես կարդացել
	III	չի գրել	չի կարդացել
Հոգնակի	I	չենք գրել	չենք կարդացել
	II	չեք գրել	չեք կարդացել
	III	չեն գրել	չեն կարդացել

Թիվ	Դեմք	Ա. ց ց յ ա լ վ ա դ ա կ ա ս ա Ր	
Ֆեզակի	I	չեյի գրել	չեյի կարդացել
	II	չեյիր գրել	չեյիր կարդացել
	III	չեր գրել	չեր կարդացել
Հոգնակի	I	չեյինք գրել	չեյինք կարդացել
	II	չեյիք գրել	չեյիք կարդացել
	III	չեյին գրել	չեյին կարդացել
Հ ա Ր ա կ ա ս ա Ր			
Ֆեզակի	I	չեմ գրած	չեմ կարդացած
	II	չես գրած	չես կարդացած
	III	չի գրած	չի կարդացած
Հոգնակի	I	չենք գրած	չենք կարդացած
	II	չեք գրած	չեք կարդացած
	III	չեն գրած	չեն կարդացած
Ա. ց ց յ ա լ հ ա Ր ա կ ա ս ա Ր			
Ֆեզակի	I	չեյի գրած	չեյի կարդացած
	II	չեյիր գրած	չեյիր կարդացած
	III	չեր գրած	չեր կարդացած
Հոգնակի	I	չեյինք գրած	չեյինք կարդացած
	II	չեյիք գրած	չեյիք կարդացած
	III	չեյին գրած	չեյին կարդացած

Թիվ	Դեմք	Ա. Ե. Գ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ.	
Ֆեզակի	I	Հգրեցի	Հկարդացի
	II	Հգրեցիր	Հկարդացիր
	III	Հգրեց	Հկարդաց
Հոգեման	I	Հգրեցինք	Հկարդացինք
	II	Հգրեցիք	Հկարդացիք
	III	Հգրեցին	Հկարդացին

2. Համալսական լեզանակ

Թիվ	Դեմք	Առաջին խոնարհում	Յերկրորդ խոնարհում
Ֆեզակի	II	մի՛ գրիր	մի՛ կարդա
	II	մի՛ գրեք (նաև՝ մի՛ գրեցեք)	մի՛ կարդաք (նաև՝ մի՛ կարդացեք)

3. Ըզնական լեզանակ

Թիվ	Դեմք	Ա. Ե. Գ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ.	
Ֆեզակի	I	Հգրեմ	Հկարդամ
	II	Հգրես	Հկարդաս
	III	Հգրի	Հկարդա
Հոգեման	I	Հգրենք	Հկարդանք
	II	Հգրեք	Հկարդաս
	III	Հգրին	Հկարդան

Թիվ	Դեմք	Ա. Ե. Գ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ.	
Ֆեզակի	I	Հգրելի	Հկարդայի
	II	Հգրելիր	Հկարդայիր
	III	Հգրեր	Հկարդար
Հոգեման	I	Հգրելինք	Հկարդայինք
	II	Հգրելիք	Հկարդայիք
	III	Հգրելին	Հկարդային

4. Պայմանական լեզանակ

Թիվ	Դեմք	Ա. Ե. Գ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ.	
Ֆեզակի	I	Հեմ գրի	Հեմ կարդա
	II	Հես գրի	Հես կարդա
	III	Հի գրի	Հի կարդա
Հոգեման	I	Հենք գրի	Հենք կարդա
	II	Հեք գրի	Հեք կարդա
	III	Հեն գրի	Հեն կարդա
Ա. Ե. Գ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ.			
Ֆեզակի	I	Հեյի գրի	Հեյի կարդա
	II	Հեյիր գրի	Հեյիր կարդա
	III	Հեր գրի	Հեր կարդա
Հոգեման	I	Հեյինք գրի	Հեյինք կարդա
	II	Հեյիք գրի	Հեյիք կարդա
	III	Հեյին գրի	Հեյին կարդա

5. ՀԱՐԿԱԳՐԱԿԱՆ յԵՂԱՏԱԿ

Թիվ	Դեմք	Ա. պ ա ո ճ ի	
Վերնագր	I	չպիտի գրեմ	չպիտի կարդամ
	II	չպիտի գրես	չպիտի կարդաս
	III	չպիտի գրի	չպիտի կարդա
Հանգստ	I	չպիտի գրենք	չպիտի կարդանք
	II	չպիտի գրեք	չպիտի կարդաք
	III	չպիտի գրեն	չպիտի կարդան
Ա. ց յ ա ա պ ա ո ճ ի			
Վերնագր	I	չպիտի գրեցի	չպիտի կարդայի
	II	չպիտի գրեցիր	չպիտի կարդայիր
	III	չպիտի գրեր	չպիտի կարդար
Վերնագր	I	չպիտի գրեցինք	չպիտի կարդայինք
	II	չպիտի գրեցիք	չպիտի կարդայիք
	III	չպիտի գրեցին	չպիտի կարդային

§ 94. ԲԱՅՆԵՐԻ ՍԵՌԸ

Իրականություն մեջ գործող կամ լինող անձը (յենթական) շրջապատված է նյութական առարկաներով և գործում է նյութական միջավայրում: Հենց այդ պատճառով ել յենթականի բազմաթիվ գործողություններ կամ յեղելություններ տեղի յեն ունենում անմիջական առարկաների վրա (նկատմամբ) կամ վրեժ առարկայի առնչակցությամբ և կամ թե յենթական ինչ-որ կրում է իր վրա ուրիշ առարկայի գործողություն. որինակ՝

Լենիկը խմում է ջուր:

Լուսիկը կտորեց իր մատիտը:

Արիկը գրում է մատիտով:

Սեդիկը տետրից մի թերթ պոկեց:

Այս գիրքը գրվել է իմ ձեռքով:

Առաջին նախադասության մեջ Լենիկի գործողությունը կատարվում է անմիջապես ջրի վրա (խմում է ջուր), յերկրորդ նախադասության մեջ Լուսիկի գործողությունը կատարվում է մատիտի վրա (կտորեց մատիտը), յերրորդ նախադասության մեջ Արիկի գործողությունը կատարվում է մատիտի առնչակցությամբ (գրում է մատիտով), յոչորրդ նախադասության մեջ Սեդիկի գործողությունը կատարվում է թերթի վրա և տետրի առնչակցությամբ, հինգերորդ նախադասության մեջ յենթական (գիրքը) կրել է իր վրա գրելու գործողությունը (գրվել է):

1. Այն բայերը, վորոնց ցույց տված գործողության կատարման համար պահանջվում է մի առարկա, վորն իր վրա կրի յենթականի գործողությունը, կոչվում են ներգործական սեռի բայեր:

Ներգործական սեռի բայերը թելադրում են ո՞ւմ կամ ի՞նչ հարցերը, վորոնց պատասխանը լինում է գործողությունը իր վրա կրող առարկայի անունը (հայցական հոլովով). որինակ՝

տեսնել (ո՞ւմ, ի՞նչ) Գեվորգին, սեղան:

սիրել (ո՞ւմ, ի՞նչ) ուսուցչին, գիրք:

բռնել (ո՞ւմ, ի՞նչ) Պետիկին, ծուկ:

քաշել (ո՞ւմ, ի՞նչ) Կիմին, պարան:

Ներգործական սեռի բայեր կան, վորոնք թելադրում են միայն ի՞նչ հարցը կամ միայն ո՞ւմ հարցը. որինակ՝

կարդալ (ի՞նչ) գիրք, խմել (ի՞նչ) ջուր:

Այն գոյականը, վորը պատասխանում է ներգործական սեռի բայի թելադրած ո՞ւմ կամ ի՞նչ հարցին (գործողությունը իր վրա կրող առարկայի անունը), դրվում է հայցական հոլովով. որինակ՝

Լեվիկը սիրում է (ի՞նչ) գիրք:

Լեվիկը սիրում է (ո՞ւմ) ուսուցչին:

Այս նախադասությունների մեջ գիրք և ուսուցիչ գոյականները դրված են հայցական հոլովով:

2. Այն բայերը, վորոնց ցույց տված գործողության կամ յեղելության կատարման համար չի պահանջվում մի առարկա, վորն իր վրա կրի այդ գործողությունը, կամ յեղելությունը, կոչվում են յեզոք սեռի բայեր. որինակ՝

վազել, գնալ, քայլել, հասնել, հեռանալ և այլն:

Ձեզոք սեռի բայերը թելադրում են ո՞ւմ, ինչի՞ (ն), ո՞ւմ մից, ի՞նչից, ո՞ւմով, ի՞նչով հարցերը (արակ., բացառ. և գործ հոլովների հարցերը): Այս հարցերին պատասխանող գոյականները դրվում են տրական, բացառական և գործիական հոլովներով: Ներգործական սեռի բայերը թելադրում են թե՛ չեզոք սեռի բայերի թելադրած հարցերը և թե՛ իրենց հատուկ՝ ո՞ւմ և ի՞նչ հարցերը:

Այսպիսով՝ չեզոք սեռի բայերի լրացումները դրվում են տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, իսկ ներգործական սեռի բայերի այն լրացումները, Վորոնք ցույց են տալիս բայի գործողությունն իր վրա կրող առարկան, դրվում են հայցական հոլովով:

3. Յերբ բալը ցույց է տալիս, վոբ յենթական է կրում իր վրա մեկ ուրիշի գործողություն, կոչվում է կրավորական սեռի. որինակ՝ գրվել, սիրվել, թափվել, և այլն:

§ 95. ԲԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ անորոշ դերբայի կազմության բայերը լինում են պարզ ածանցավոր:

1. Կազմությամբ պարզ բայեր են կոչվում այն բայերը, Վորոնց անորոշ դերբալը կազմված է բայի արմատից և ել, ալ վերջավորություններից. որինակ՝

գրել (արմատը՝ գր կամ գիր), կարդալ (արմատն է կարդ), լսել (արմատն է լիս կամ լս), խոսել (արմատն է խոս), պահել (արմատն է պահ):

2. Կազմությամբ ածանցավոր են կոչվում այն բայերը, Վորոնց անորոշ դերբայի արմատի և ել, ալ վերջավորությունների միջև մշտապես կան աճ, եճ, ճ, չ ածանցները, իսկ անցյալ կատարյալում ենրա հիմքից կազմված ձևերում ալդ ածանցները չկան. որինակ՝

հեռանալ (արմատն է հեռ, ածանցը՝ աճ, վերջավորությունը՝ ալ). մոռնել (արմատն է մոս կամ մուս, ածանցն է ճ, վերջավորությունը՝ ել). թռչել (արմատն է թիւ, ածանցն է չ, վերջավորությունը՝ ել):

§ 96. ԵՆԱԼ ՅԵՎ ԱՆԱԼ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ (ԵՆ ԿԱՄ ԱՆ ԱԾԱՆՅ ՈՒՆԵՅՈՂ) ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

I. ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ձԵՎ

ԱճՈՐՈՇ	դերբայ՝	մոտենալ.	հեռանալ.
ԱճԿԱՏԱՐ	»	մոտենում.	հեռանում.
Ապառճի	»	մոտենալու.	հեռանալու.
Վաղակատար	»	մոտեցել.	հեռացել.
Հարակատար	»	մոտեցած.	հեռացած.
Յենթակայական	»	մոտեցող.	հեռացող.
Ըղծական	»	մոտենա.	հեռանա.

II. ՅԵՂԱՆԱԿԱՅԻՆ ձԵՎ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱ

Յ Ե Ղ Ա Կ Ի

մոտենում եմ	հեռանում եմ
» ես	» ես
» ե	» ե

Հ Ո Ղ Ա Կ Ի

մոտենում ենք	հեռանում ենք
» եք	» եք
» են	» են

ԱճԵՂԱԿԱՆ ԿԱՏԱՐ

Յ Ե Ղ Ա Կ Ի

մոտենում եյի	հեռանում եյի
» եյիր	» եյիր
» եր	» եր

Հ Ո Ղ Ա Կ Ի

մոտենում եյինք	հեռանում եյինք
» եյիք	» եյիք
» եյին	» եյին

Ապառնի

Ֆ ե գ ա կ ի

մոտենալու չեմ	հեռանալու չեմ
մոտենալու չես	հեռանալու չես
մոտենալու չե	հեռանալու չե

Հ ո գ ն ա կ ի

մոտենալու չենք	հեռանալու չենք
մոտենալու չեք	հեռանալու չեք
մոտենալու չեն	հեռանալու չեն

Անցյալ ապառնի

Ֆ ե գ ա կ ի

մոտենալու եյի	հեռանալու եյի
մոտենալու եյիր	հեռանալու եյիր
մոտենալու յեր	հեռանալու յեր

Հ ո գ ն ա կ ի

մոտենալու եյինք	հեռանալու եյինք
մոտենալու եյիք	հեռանալու եյիք
մոտենալու եյին	հեռանալու եյին

Վաղակատար

Անցյալ վաղակատար

Ֆ ե գ ա կ ի

Ֆ ե գ ա կ ի

մոտեցել եմ	հեռացել եմ	մոտեցել եյի	հեռացել եյի
մոտեցել ես	հեռացել ես	մոտեցել եյիր	հեռացել եյիր
մոտեցել ե	հեռացել ե	մոտեցել եր	հեռացել եր

Հ ո գ ն ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

մոտեցել ենք	հեռացել ենք	մոտեցել եյինք	հեռացել եյինք
մոտեցել եք	հեռացել եք	մոտեցել եյիք	հեռացել եյիք
մոտեցել են	հեռացել են	մոտեցել եյին	հեռացել եյին

Հորակատար

Անցյալ հորակատար

Ֆ ե գ ա կ ի

Ֆ ե գ ա կ ի

մոտեցած եմ	հեռացած եմ	մոտեցած եյի	հեռացած եյի
մոտեցած ես	հեռացած ես	մոտեցած եյիր	հեռացած եյիր
մոտեցած ե	հեռացած ե	մոտեցած եր	հեռացած եր

Հ ո գ ն ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

մոտեցած ենք	հեռացած ենք	մոտեցած եյինք	հեռացած եյինք
մոտեցած եք	հեռացած եք	մոտեցած եյիք	հեռացած եյիք
մոտեցած են	հեռացած են	մոտեցած եյին	հեռացած եյին

Անցյալ կատարյալ

Ֆ ե գ ա կ ի

մոտեցա	հեռացա
մոտեցար	հեռացար
մոտեցալ	հեռացալ

Հ ո գ ն ա կ ի

մոտեցանք	հեռացանք
մոտեցաք	հեռացաք
մոտեցան	հեռացան

2. Հրամայական յեղանակ

Ֆ ե գ ա կ ի

Հ ո գ ն ա կ ի

մոտեցի՛ր	հեռացի՛ր	մոտեցե՛ք	հեռացե՛ք
----------	----------	----------	----------

3. Ըղծական յեղանակ

Ապառնի

Անցյալ ապառնի

Ֆ ե գ ա կ ի

Ֆ ե գ ա կ ի

մոտենամ	հեռանամ
մոտենաս	հեռանաս
մոտենա	հեռանա

մոտենայի	հեռանայի
մոտենայիր	հեռանայիր
մոտենար	հեռանար

Հ ո գ ւ ա կ ի

մոտենանք	հեռանանք
մոտենաք	հեռանաք
մոտենան	հեռանան

Հ ո գ ւ ա կ ի

մոտենայինք	հեռանայինք
մոտենայիք	հեռանայիք
մոտենային	հեռանային

4. Պայմանական յեղանակ

Ապառնի

Անցյալ ապառնի

Ֆ ե գ ա կ ի

Ֆ ե գ ա կ ի

կմոտենամ	կհեռանամ	կմոտենայի	կհեռանայի
կմոտենաս	կհեռանաս	կմոտենայիր	կհեռանայիր
կմոտենա	կհեռանա	կմոտենար	կհեռանար

Հ ո գ ւ ա կ ի

կմոտենանք	կհեռանանք	կմոտենայինք	կհեռանայինք
կմոտենաք	կհեռանաք	կմոտենայիք	կհեռանայիք
կմոտենան	կհեռանան	կմոտենային	կհեռանային

Հ ո գ ւ ա կ ի

5. Հարկագրական

Ապառնի

Ֆ ե գ ա կ ի

պիտի մոտենամ	պիտի հեռանամ
պիտի մոտենաս	պիտի հեռանաս
պիտի մոտենա	պիտի հեռանա

Հ ո գ ւ ա կ ի

պիտի մոտենանք	պիտի հեռանանք
պիտի մոտենաք	պիտի հեռանաք
պիտի մոտենան	պիտի հեռանան

Անցյալ ապառնի

Ֆ ե գ ա կ ի

պիտի մոտենայի	պիտի հեռանայի
պիտի մոտենայիր	պիտի հեռանայիր
պիտի մոտենար	պիտի հեռանար

Հ ո գ ւ ա կ ի

պիտի մոտենայինք	պիտի հեռանայինք
պիտի մոտենայիք	պիտի հեռանայիք
պիտի մոտենային	պիտի հեռանային

Ենալ և անալ զերջավորովոյ լրացերը պատկանում են II խոնարհման:

§ 97. Դ և 2 ԱԾԱՆՅ ՈՒՆԵՅՈՂ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ

I. Դերբայական ձեվ

Անորոհ	դերբայ՝	մտնել. թռչել.
Անկատար	»	մտնում. թռչում.
Ապառնի	»	մտնելու. թռչելու.
Վաղակատար	»	մտել. թռել
Հարակատար	»	մտած. թռած.
Ֆեքականական	»	մտնող. թռչող.
Ըղծական	»	մտնի. թռչի.

II. ՅեղԱնԱծԻՆ Զեվ

1. Սահմանական յեղանակ

Ներկա

Անցյալ անկատար

Ֆեգակի

Ֆեգակի

մտնում եմ	թռչում եմ	մտնում եյի	թռչում եյի
մտնում ես	թռչում ես	մտնում եյիր	թռչում եյիր
մտնում ե	թռչում ե	մտնում եր	թռչում եր

Հոգնակի

Հոգնակի

մտնում ենք	թռչում ենք	մտնում եյինք	թռչում եյինք
մտնում եք	թռչում եք	մտնում եյիք	թռչում եյիք
մտնում են	թռչում են	մտնում եյին	թռչում եյին

Ապառնի

Ֆեզակի

մտնելու յեմ թռչելու յեմ
 մտնելու յես թռչելու յես
 մտնելու յե թռչելու յե

Հոգնակի

մտնելու յենք թռչելու յենք
 մտնելու յեք թռչելու յեք
 մտնելու յեն թռչելու յեն

Վաղարկատար

Ֆեզակի

մտել եմ թռել եմ
 մտել ես թռել ես
 մտել ե թռել ե

Հոգնակի

մտել ենք թռել ենք
 մտել եք թռել եք
 մտել են թռել են

Հարակատար

Ֆեզակի

մտած եմ թռած եմ
 մտած ես թռած ես
 մտած ե թռած ե

Հոգնակի

մտած ենք թռած ենք
 մտած եք թռած եք
 մտած են թռած են

Անցյալ ապառնի

Ֆեզակի

մտնելու եյի թռչելու եյի
 մտնելու եյիր թռչելու եյիր
 մտնելու յեր թռչելու յեր

Հոգնակի

մտնելու եյինք թռչելու եյինք
 մտնելու եյիք թռչելու եյիք
 մտնելու եյին թռչելու եյին

Անցյալ վաղարկատար

Ֆեզակի

մտել եյի թռել եյի
 մտել եյիր թռել եյիր
 մտել եր թռել եր

Հոգնակի

մտել եյինք թռել եյինք
 մտել եյիք թռել եյիք
 մտել եյին թռել եյին

Անցյալ հարակատար

Ֆեզակի

մտած եյի թռած եյի
 մտած եյիր թռած եյիր
 մտած եր թռած եր

Հոգնակի

մտած եյինք թռած եյինք
 մտած եյիք թռած եյիք
 մտած եյին թռած եյին

Անցյալ կատարյալ

Ֆեզակի

մտա թռա
 մտար թռար
 մտալ թռալ

Հոգնակի

մտանք թռանք
 մտաք թռաք
 մտան թռան

2. Հրամայական յեղանակ

Ֆեզակի

մտի՛ր թռի՛ր

Հոգնակի

մտե՛ք թռե՛ք

3. Ըղձական յեղանակ

Ապառնի

Ֆեզակի

մտնեմ թռչեմ
 մտնես թռչես
 մտնի թռչի

Հոգնակի

մտնենք թռչենք
 մտնեք թռչեք
 մտնեն թռչեն

4. Պայմանական յեղանակ

Ապառնի

Ֆեզակի

կմտնեմ կթռչեմ
 կմտնես կթռչես
 կմտնի կթռչի

Անցյալ ապառնի

Ֆեզակի

մտնելի թռչելի
 մտնելիր թռչելիր
 մտներ թռչեր

Հոգնակի

մտնելինք թռչելինք
 մտնելիք թռչելիք
 մտնելին թռչելին

Անցյալ ապառնի

Ֆեզակի

կմտնելի կթռչելի
 կմտնելիր կթռչելիր
 կմտներ կթռչեր

Հոգնակի		Հոգնակի	
կմտնենք	կթռչենք	կմտնելինք	կթռչելինք
կմտնեք	կթռչեք	կմտնելիք	կթռչելիք
կմտնեն	կթռչեն	կմտնելին	կթռչելին

5. Հարկադրական յեղանակ

Ապառնի		Անցյալ ապառնի	
Ֆեզակի		Ֆեզակի	
պիտի մտնեմ	պիտի թռչեմ	պիտի մտնելի	պիտի թռչելի
պիտի մտնես	պիտի թռչես	պիտի մտնելիք	պիտի թռչելիք
պիտի մտնի	պիտի թռչի	պիտի մտնելն	պիտի թռչելն

Հոգնակի		Հոգնակի	
պիտի մտնենք	պիտի թռչենք	պիտի մտնելինք	պիտի թռչելինք
պիտի մտնեք	պիտի թռչեք	պիտի մտնելիք	պիտի թռչելիք
պիտի մտնեն	պիտի թռչեն	պիտի մտնելին	պիտի թռչելին

§ 98. ԲԱՅԻ ԿԵՐՊԵՐԸ

Բայի կերպեր կոչվում են բայի ածանցավոր ձևերը, վորոնցով բայը ցույց է տալիս միեվնույն գործողության կատարման տարբեր կերպը. որիննակ՝

նստել, նստեցնել, նստոտել, կոտրել, կոտրվել, կոտրատել և այլն:

Բային կերպ տվող ածանցներն են՝ վ, ացն, եցն, ցն, ոս, աս, կոս և նմանները, վորոնք կոչվում են կերպավորող ածանցներ կամ կերպաածանցներ: Բայն առանց կերպավորող ածանցի կոչվում է սոսկական կերպի. բայի մյուս կերպերն են՝ կրավորական, պատճառական և բազմապատկական:

1. Ֆերբ բայն ստանում է «վ» ածանցը, բայց ուղղակի ցույց չի տալիս, վոր յեմբական մի ուրիշից է կրում իր վրա այդ գործողությունը, նա դառնում է կրավորական կերպի բայ. որիննակ՝

Դարը սարից գլորվում է ցած:

Պատից մի աղյուս պոկվեց և վայր ընկավ:

Այս նախադասություններն մեջ գլորվում է և պոկվեց ուղղակի չեն ցույց տալիս, թե մի ուրիշն է գլորում քարը կամ մի ուրիշը պոկեց աղյուսը, ուստի գլորվում է և պոկվեց կրելն են կրավորական կերպի բայեր:

2. Ֆերբ բայն ստանում է «ացն», «եցն», «ցն» ածանցները յեվ ցույց է տալիս, վոր նույն գործողությունը յեմբական կատարել է տալիս մի ուրիշին, նա դառնում է պատճառական կերպի բայ. որիննակ՝

Նստեցնում է քեզ, տաք ջուր խմեցնում կամ մի թաս ողի...

(Հովհ. Թումանյան)

Նստեցնում է և խմեցնում է բայակերպերը ցույց են տալիս, վոր յենթական ինքը չի նստում և չի խմում, այլ նստել է տալիս և խմել է տալիս մեկ ուրիշին:

Պատճառական կերպ ունեցող բայը ներգործական սեռի բայի բնույթ ունի. որիննակ՝

խմեցնել (սև և բնի):

Պատճառական կերպի բայերը հաճախ գործ են ածվում խոնարհվող բայի և սալ բայի հարադրությունով. որիննակ՝

գրել տալ, կարդալ տալ:

3. Ֆերբ բայն ստանում է «աս», «ոս», «ս», «կոս» և նման ածանցներ յեվ ցույց է տալիս, վոր յեմբական գործողությունը կատարում է բազմապատկ (աս) անգամ, ապա նա դառնում է բազմապատկական կերպի բայ. որիննակ՝

Ցատկոտել, թռչկոտել, կտրատել, մորթոտել:

Ցատկոտել նշանակում է շատ անգամ ցատկել:

Թռչկոտել նշանակում է շատ անգամ թռչել:

Կտրատել նշանակում է շատ անգամ կտրել:

Մորթոտել նշանակում է շատ անգամ մորթել:

§ 99. ԲԱՅԵՐԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԵՐՊԻ ԿԱՄ ՍԵՌԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ

1. Դերբայական ձևեր

Անորոշ	դերբայ՝	գրվել. կարդացվել.
Անկատար	»	գրվում. կարդացվում.
Ապառնի	»	գրվելու. կարդացվելու.
Վաղակատար	»	գրվել. կարդացվել.
Հարակատար	»	գրված. կարդացված.
Ֆեմբական	»	գրվող. կարդացվող.
Ըղծական	»	գրվի. կարդացվի.

II. Ֆեզանկային ձեւ

1. ՄԱՀԾԱՆՍԿԱՆ ՖԵԶԱՆԿ

Ներկա Ֆեզակի	Անցյալ անկատար Ֆեզակի
գրվում եմ կարդացվում եմ	գրվում եյի կարդացվում եյի
գրվում ես կարդացվում ես	գրվում եյիր կարդացվում եյիր
գրվում ե կարդացվում ե	գրվում եր կարդացվում եր
Հոգնակի	Հոգնակի
գրվում ենք կարդացվում ենք	գրվում եյինք կարդացվում եյինք
գրվում եք կարդացվում եք	գրվում եյիք կարդացվում եյիք
գրվում են կարդացվում են	գրվում եյին կարդացվում եյին

Ապառնի

Ֆեզակի

